

ՅՈՒ. Վ. ՅՈՒԶԲԱՇՅԱՆ, Ա. Ա. ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ, Վ. Ի. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

5-րդ ԴԱՍԱՐԱՆ

Մեթոդական ուղեցույց



ԵՐԵՎԱՆ 2023

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ՀՏԴ 000

ԳՄԴ 000

Ե 000

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ: 5-րդ դասարան: Մեթոդական ուղեցույց / Յու. Վ. Յուզբաշյան,
Ե 000 Ե. Ա. Փահլևանյան, Վ. Ի. Ավետիսյան.— Եր.: «Զանգակ» հրատ., 2023.— 80 էջ:

ՀՏԴ 000

ԳՄԴ 000

ISBN 978-9939-99-000-0

© Յուզբաշյան Յ., 2023

© Փահլևանյան Ա., 2023

© Ավետիսյան Վ., 2023

© «Զանգակ-97» ՍՊԸ, 2023

5-րդ դասարանի մեթոդական ձեռնարկում երաժշտական դաստիարակության հիմնահարցերի լուծումը բխում է հանրակրթական դպրոցի «Երաժշտություն» առարկայի չափորոշչի և ծրագրի պահանջներից:

Մեթոդական ձեռնարկում ներկայացված են 5-րդ դասարանցիների տարիքային և հոգեբանական այն առանձնահատկությունները, որոնք կապված են նրանց երաժշտական ընդունակությունների զարգացման ու մարդկային լավագույն արժեքների ընկալման հետ:

Այդ տարիքում ավելի ակտիվ են զարգանում երեխայի մտավոր, հոգևոր, ֆիզիկական ու գեղագիտական կարողություններն ու հմտու թյունները:

5-րդ դասարանցիները բնութագրվում են որպես ակտիվ, շարժուն երեխաներ, որոնց հետաքրքրությունները ավելի շատ են ու բազմակող մանի: Նրանց եզրահանգումներն ավելի ինքնուրույն են, երևակայությունը՝ կոնկրետից վերացականին գնացող: Սկսում է ձևավորվել իրականության հանդեպ ստեղծագործական վերաբերմունքը: Այս շրջանում են արթնանում ու զարգանում երաժշտության նկատմամբ երեխայի հետաքրքրությունները, նրա բնավորությունը, ազգային դիմագիծը, բարոյահոգեբանական խառնվածքը և այլն: Ավելի ակտիվ են զարգանում ճանաչողական ունակությունները՝ ընկալումը, հիշողությունը, մտածողությունը, կենտրոնացման կարողությունը, ստեղծագործական երևակայությունը, առաջ են գալիս ավելի բարձր գիտակցությունը, բարոյական նորմերի ընկալումը և գեղագիտական զգացողությունը:

Այս դասարանում շարունակվում է երաժշտական դաստիարակության բնագավառում հայ կոմպոզիտոր-մանկավարժների՝ Կոմիտասի, Սպ. և Ռոմ. Մելիքյանների, Ա. Մանուկյանի, Մ. Միրզայանի, Դ. Ղազարյանի, Մ. Մազմանյանի փորձի, ինչպես նաև համաշխարհային լավագույն մասնագետների ձեռքբերումների կիրառումը (Դմ. Կաբալակի, Ջ. Կոդայի, Էմ. Ժակ-Դավլյոգ, Կ. Օրֆ և այլք):

Դպրոցական առարկաների համակարգում արվեստները, մասնավոր ապես երաժշտությունը, հանդես են գալիս ոչ միայն իբրև սովորողների գեղագիտական դաստիարակությունը ապահովող, նրանց հուզազգաց մունքային զարգացումը կազմակերպող, այլ նաև կրթական համակարգը մարդկայնացնող միջոց: Պատահական չէ, որ դեռ 5-րդ դարում Սահակ-Մեսրոպյան առաջին հայկական դպրոցներում երաժշտությանը տրվել է կարևոր դեր և նշանակություն:

Փոխվում են ժամանակները, փոխվում են նաև ուսուցման ու դաստիարակության բովանդակությունը, մեթոդները, իսկ երաժշտությունը շարունակում է կատարել դաստիարակող և զարգացնող իր առաքելությունը:

5-րդ դասարանում երաժշտական դաստիարակությունը ունի իր նպատակները և խնդիրները:

Նպատակներն են.

- երեխաներին դաստիարակել որպես հոգևոր և բարոյական բարձր արժանիքներով օժտված Մարդիկ,

- հայ երեխաների երաժշտական դաստիարակության հիմքում դնել ազգային երաժշտությունը՝ չանտեսելով նաև այլ ժողովուրդների ազգային և համաշխարհային դասական կոմպոզիտորների ստեղծած երաժշտությունը,

- զարգացնել սովորողների ստեղծագործական երևակայությունը, նպաստել ինքնաճանաչմանը և ինքնաարտահայտմանը,

- սովորողներին տեսանելի դարձնել երաժշտության և կյանքի միջև առկա կապերը:

Խնդիրներն են.

- շարունակել արվեստների գեղեցկությունը զգալու և ընկալելու կարողության ձևավորումն ու զարգացումը:

- կատարել երաժշտության և արվեստի մյուս տեսակների փոխհա բաբերության և փոխազդեցության վերլուծություն,

- աշակերտների մեջ ձևավորել արվեստի տեսակների արտահայտ չականության տարբերությունները զգալու կարողություն,

- ցույց տալ, որ արվեստի տեսակները կյանքի ճանաչողության և հոգևոր աշխարհի վերափոխման միջոցներ են,

- ձևավորել լսողական և տեսողական տպավորությունները իմաս տավորելու և արտահայտելու կարողություն,

- զարգացնել երաժշտական ստեղծագործությունները լսելու և ինք նուրույն մեկնաբանելու կարողություն,
- խորացնել ճանաչողական գործունեությունը, զարգացնել տրամաբանական, հաղորդակցական, համագործակցային կարողությունները,
- շարունակել երաժշտալսողական պատկերացումների, նոտաներով և ձեռքի նշաններով երգելու կարողության, անհատական և խմբական երգեցողության հմտությունների զարգացումը,
- զարգացնել սովորողների ստեղծագործական կարողությունները: Հիշյալ խնդիրների իրականացման հիմքում երաժշտության ակտիվ ընկալումն է սովորողների կողմից, նրանց բազմատեսակ երաժշտական գործունեությունը:

5-րդ դասարանի աշակերտների երաժշտական դաստիարակության բովանդակությունը կրտսեր դպրոցում ձեռք բերած գիտելիքների, հմտությունների և երաժշտության արժեքների կարողության շարունակությունն է: Սակայն հաճախ աշակերտները 5-րդ դասարան են հասնում կրտսեր դպրոցի երաժշտության առարկայի ծրագրային պահանջները չյուրացրած: Նման դեպքերում 5-րդ դասարանի երաժշտության ուսուցիչն իր աշխատանքը կազմակերպում է այնպես, որ տարբեր երաժշտական զարգացում ունեցող աշակերտների համար երաժշտության դասը լինի հետաքրքիր, միաժամանակ՝ արդյունավետ: Նա պետք է կարողանա 5-րդ դասարանցիներին ծանոթացնել կրտսեր դպրոցում բաց թողած երաժշտական նյութին:

Երաժշտության ուսուցիչն իր աշխատանքը պլանավորում է այնպես, որ կրտսեր դպրոցում անցած և 5-րդ դասարանում անցնելիք նյութերի միջև տրամաբանական կապ ստեղծի՝ ուշադրության կենտրոնում պահելով 5-րդ դասարանի երաժշտական նյութի յուրացումը:

**ԵՐԱԺՇՏԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ**

Երգեցողություն: «Երաժշտություն» առարկան պարապող ուսուցիչը պետք է լավ իմանա մանկական ձայնի զարգացման առանձնահատկու թյունները, մանկական ձայնի պահպանման և մշակման մեթոդիկան, որ պեսզի աշակերտին ոչ միայն ճիշտ ու գեղեցիկ երգել սովորեցնի, այլև զարգացնի նրա երգչային ձայնը:

Ընդհանրապես մանկական երգչային ձայնի զարգացումը տեղի է ունենում անհամաչափ: Ձայնալարերն ավելի արագ են զարգանում, քան շնչառական և արտասանական օրգանները՝ արձագանքարանները (ռեզոնատորները), շնչափողը, թոքերը, շնչման և արտաշնչման մկանները, ստոծանին, կրծքավանդակը և այլն:

Այդ է պատճառը, որ կրտսեր դպրոցի երեխաների ձայները չունեն հարուստ «կրծքային հնչողություն»: Այդ տարիքի երեխաների երգչային ձայնածավալը փոքր է, հնչողությունը՝ թույլ, երանգը՝ ոչ հագեցած (9–215):

5–րդ դասարանցիների երգչային ձայնը որոշ փոփոխության է են թարկվում: Աղջիկների երգչային ձայնածավալը հասնում է 1–ին օկտավի դո–ից մինչև 2–րդ օկտավի դո, ըն հնչյունները, իսկ տղաներինը՝ փոքր օկտավի (լա) սի հնչյուններից մինչև 1–ին օկտավի լա, սի հնչյունները: Այդ ձայները հնչում են թեթև, մասնավորապես վերին ձայնասահմանում՝ «գլխաձայնային»: Ձայներն առանձապես աչքի չեն ընկնում ուժգնությամբ և երանգային հագեցվածությամբ:

5–րդ դասարանցիները պետք է կարողանան երգել ազատ, թեթև, հնչեղ ձայնով, տարբերել ճիշտ շնչառությամբ երգելու ձևերը, օգտվել ձայ նի փափուկ և կոշտ գրոհով երգելու հնարից: Պետք է զարգացնել ճիշտ շնչառությամբ, երկարաձիգ երգելու հմտությունը, արտաշնչումը, երգի աստիճանական մեղմացման և ուժեղացման դինամիկ երանգները: Երե խային պետք ծանոթացնել լեզատո, ստակատո կատարողական հնար ներին և սովորեցնել երգի բառերն արտաբերել պարզ, հստակ, լսելի ու հասկանալի:

Ճիշտ և գեղեցիկ երգելու համար անհրաժեշտ է աշակերտներին սո վորեցնել ճիշտ շնչել և արտաշնչել: Երգեցողությունը շնչառության ար վեստ է. պետք է մեծ ուշադրություն դարձնել դրան: Սովորական շնչա ռությունը տարբերվում է երգչային շնչառությունից՝ շնչելու և արտաշնչելու քանակականությամբ և տևականությամբ: Մարդը, երբ երգում է, շունչ է վերցնում: Կարևոր է, թե թոքերի ո՞ր մասն է ակտիվ մասնակցում շնչառությանը: Եթե օդը լցվում է թոքերի վերին մասը, երգելու ժամանակ աշակերտն ակամա ուսերը բարձրացնում է, լարվում են վզի մկանները, կրծքավանդակը: Նման պայմաններում ձայնալարերը նույնպես լարվում են, երգչային ձայնը չի ունենում սլացք, ուժգնություն, ձայնի երանգը խամրում է, ձայնածավալը՝ փոքրանում: Իսկ եթե օդը լցվում է թոքերի միջին ու, մանավանդ, ստորին մասը, ստոծանին սկսում է ակտիվ աշ խատել: Այսպիսի խառը շնչառությունը համարվում է ճիշտ երգեցողու թյան հիմքը:

Երգեցողության համար ինչքան կարևոր է ճիշտ ներշնչելը, նույնքան անհրաժեշտ է սահուն, երկարաձիգ արտաշնչելը: Դա ապահովում է ճիշտ, գեղեցիկ երգեցողությունը: Հատուկ ձայնավարժությունների մի ջոցով հնարավոր է դառնում աշակերտների երգչային ձայնը մշակել այնպես, որ շնչելը և արտաշնչելը դառնան ավտոմատացված: Յուրա քանյուր ձայնավարժություն պետք է կրկնել մի քանի անգամ: Օրինակ՝

1. Կանգնել ուղիղ, ուսերը՝ իջեցրած, շնչել քթով, կարծես հոտավետ ծաղկից հոտ ես քաշում, դանդաղ արտաշնչել, կարծես փչում ես վառվող մոմի լեզվակին, բայց՝ ո՛չ հանգցնելու նպատակով:

2. Ուսուցչի ցուցումով խոր շունչ վերցնել՝ առանց ուսերը բարձրացնելու, ապա երգել օ կամ ու ձայնավորը: Երգելու ժամանակ ուսուցիչը բարձր հաշվում է «մեկ, երկու, երեք, չորս» և այլն:

Աշակերտները ձգտում են մեկը մյուսից ավելի երկարաձիգ երգել: Վարժությունը կրկնվում է, ամեն անգամ ավելացվում է հաշիվը:

3. Դանդաղ քայլել: Երկու քայլին ներշնչել, երկուսին՝ արտաշնչել: Ապա ներշնչել երկու քայլին, իսկ արտաշնչելը հասցնել 6–8 քայլի սահմանները:

4. Խոր ներշնչել, ապա արտաշնչել և երկարաձիգ արտասանել (երգել) հետևյալ հնչյունակապակցությունները՝ բոմ, բիմ, դոն, դին, շեշտել վերջին բաղաձայնը:

5. Խոր շունչ վերցնել, ապա մեկ արտաշնչմամբ երգել որևէ բաց վանկով բառ կամ վանկ. մա–մաա, մի–միի, մո–մոռ, մու–մուու և այլն:

Երգեցողության ունակությունները, լադային և հարմոնիկ լսողություն նր, ռիթմական զգացողությունը, կատարողական հմտությունները, եր կարածից երգելու կարողության զարգացումը ապահովելու համար կա տարվում են դանդաղ տեմպ ունեցող, հանգիստ բնույթի երգեր, որտեղ առկա են 2, 3 և 4 տևողության հնչյուններ:

4 4 4

Երկարածից (կանտիլենային) երգեցողության զարգացման համար օգտակար է երգել նաև միևնույն և մածոր հնչյունաշարերը՝ երկու, երեք, չորս քառորդ տևողության հնչյուններով: Նպատակահարմար է երգեցողությունը սկսել հնչյունաշարի 5-րդ ձայնաստիճանից՝ դոմինանտից, որն ապահովում է երգեցողության ակտիվ սկիզբը, թեթև հնչողությունը: Երգեցողության ժամանակ պետք է ուշադրություն դարձնել ձայնավոր և բաղաձայն հնչյունների ճիշտ արտաբերման վրա: Ճիշտ կլինի, եթե ձայնավարժությունները սկսվեն փակ հնչող ձայնավորների երգեցողությամբ՝ օ, ու, միջին հաստվածում օգտագործվեն բաց հնչող ձայնավորները (ա, ի, է): Օրինակ.

Օ, ի, ա, է, ու: օ, է, ի, ա, օ, է, ի, ու:



Ա, ի, է ձայնավորները օգնում են երգչային ձայնի բաց, թռչող հնչողությանը, իսկ օ, ու ձայնավորները նպաստում են կլորացված, փակ հնչողության զարգացմանը:

Երգչային ձայնի շարժունակության զարգացմանը օգնում է նաև հնչյունաշարի երգեցողությունը՝ երաժշտական հնչյունների վանկային (դո, ըե, մի) անուններով:

Երգչային ձայնի աստիճանական ուժեղացման ու մեղմացման կարողության զարգացման համար կատարել հետևյալ ձայնավար ժությունը.



Երաժշտության դասին ձևավորվում ու զարգանում են ոչ միայն երգչային ձայնը, կատարողական հմտությունները, այլև շարունակվում է խմբական երկձայն և բաղաձայն երգեցողության կարողությունների և հմտությունների զարգացումը:

Խմբական երգեցողության նախնական փուլում մեծ ուշադրություն պետք է դարձնել մաքուր ունիստային հնչողության, ճիշտ ձայնակազմության, հստակ առողանության, իրար լսելու կարողության զարգացման վրա, հետո միայն պետք է անցնել երկձայն երգեցողության ունակության զարգացմանը, քանի որ մաքուր ունիստային անսամբլը երկձայն և բաղաձայն երգեցողության հիմքն է:

Առհասարակ՝ երկձայն երգեցողության կարողության և հմտության ձևավորումն ու զարգացումը սկսվում են առաջին դասարանից, երբ երեխաները սովորում են երգել նվագակցությամբ: Նրանց պետք է ուսուցա նել, որ միաժամանակ լսեն երգի մեղեդին և նվագակցությունը: Հարմոնիկ լսողության զարգացումն ընթանում է նաև այն ժամանակ, երբ երեխան միաժամանակ կատարում է երկու գործողություն. երգում է, ծափում՝ ցույց տալով երգի ուժեղ և թույլ մասերը, վերարտադրում երգի մեղեդու ռիթմական պատկերները կամ կատարում ինքնուրույն ռիթմական նվագակցություններ:

Լսողության զարգացման և ձեռքի նշաններով երգեցողության աշխատանքները նույնպես սկսվում են առաջին դասարանից (տե՛ս 1–4 դասարանների երաժշտության մեթոդական ձեռնարկը, Երևան, 2008): Ուսուցիչը տեսնելով, որ իր աշակերտները տարրական դասարանն ընդհանուր առմամբ համապատասխան գիտելիքներ, սկսում է տարրական դասարանների ծրագրային պահանջների լրացումը ավելի արագացված տեմպով՝ հաշվի առնելով 5-րդ դասարանցիների ընկալման հնարավորությունները:

«ԿԱՔԱՎԻ ԵՐԳԻ» ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

5-րդ դասարանում որոշ երգեր տրված են նոտաներով երգելու և սովորելու համար: Նախքան երգի ուսուցումը տեղեկություններ են տրվում երգի հեղինակների և նրանց ապրած ժամանակաշրջանի

առողջանության, մաքուր հնչերանգավորման, նոտաներով երգեցողության կարողությունների և հմտությունների զարգացման աշխատանքները:

«Ա՛խ, Ի՛նչ ԼԱՎ ԵՆ» ԵՐԳԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Ա՛խ, Ի՛նչ ԼԱՎ ԵՆ...

Խոսք և երաժշտ.՝ Հովհ. Թումանյանի

Հանդարտ

Ա՛խ, Ի՛նչ Լավ են սա - րի վր - րա,
 Անց-նում օ - րերն ա-նո՛ւշ, ա - նո՛ւշ, Ա - նոր-ջա - յին
 թե - թե - մա - սա՛հ. Անա ու հո - մեռն ա-նո՛ւշ. ա - նո՛ւշ:

«Ա՛խ, Ի՛նչ Լավ են» երգի խոսքերի և երաժշտության հեղինակը Հովհ. Թումանյանն է:

Երգն ունի դանդաղ տեմպ, եռամաս չափ ու քնարական բնույթ: Գո վերգում է հայրենի բնությունը:

Երգը երկձայն է: Նախ պետք է յուրաքանչյուր ձայն նոտաներով երգել առանձին-առանձին՝ ուշադրություն դարձնելով առանձին ձայների մաքուր, ունիստ երգեցողության վրա: Շատ օգտակար է ռնգային երգեցողությունը, որի ընթացքում աշակերտներն ավելի Լավ են լսում միմյանց: Նոտաներով երկու ձայնախմբերն առանձին-առանձին սովորելուց հետո դժվար չի լինի երգը կատարել երկձայն (տե՛ս դասագիրքը):

Տարրական դասարաններում կիրառվող ուսուցման մի շարք միջոց ներ, մասնավորապես երկձայն երգեցողության հետ կապված՝ կարելի է կիրառել նաև 5-րդ դասարանում: Օրինակ՝ «Երգող ձեռքեր» խաղով ուսուցիչը աշակերտներին բաժանում է երկու ձայնախմբի և ձեռքի նշան ներով ցուցադրում երկձայն որևէ ձայնավարություն կամ երգ:

Յուրաքանչյուր ձայնախումբ երգում է իրեն ուղղված ձեռքի նշաններով:

Ձայն ձեռք
 Ձայն ձեռք
 Ձայն ձեռք

Մեկ այլ խաղ. «Ուսուցիչ-աշակերտ» խաղի ժամանակ աշակերտն էր երգում են երգի մայր մեղեդին, իսկ ուսուցիչը՝ 2-րդ ձայնը: Այնուհետև տեղերը փոխվում են. ուսուցիչը երգում է մայր մեղեդին, իսկ աշակերտ ները՝ 2-րդ ձայնը: Երկձայն երգն այսպես սովորելուց հետո աշակերտները երգում են երկձայն, իսկ ուսուցիչը ղեկավարում է կատարումը:

Կանոն

5-րդ դասարանում աշակերտները շարունակում են կատարել երկ ձայն և եռաձայն կանոնաձև երգեր և ռիթմական վարժություններ:

Կանոնը բազմաձայն երգ է, բոլոր ձայները կատարում են միևնույն մեղեդին, սակայն երգը սկսում են ոչ թե միաժամանակ, այլ մեկը մյուսից հետո՝ որոշակի ուշացումով:

ԱՇՈՒՆ

Խոսք՝ Հ. Հայրապետյանի Երաժշտ.՝ Մ. Անցևի

1. Աշխույժ



Դաշտ ու այգի, դեղին հագած, ծառ ու ծաղիկ մեր կա ցան,

2.



թրոշուն նեղ բլուր բամբակ, մեր աշխարհից հեռա ցան:

Դաշտ ու այգի դեղին հագած,	Օրը մռայլ, ցուրտ ու տխուր,
Ծառ ու ծաղիկ մերկացած,	Բարակ անձրևն է մաղում,
Թռչունները երամ-երամ	Մեզն է պատել սար ու բլուր,
Մեր աշխարհից հեռացած:	Էլ մարդ չկա դաշտերում:

Երկվայն կանոնի կատարմանն աշակերտները ծանոթ են 3-րդ դասաբանից: Բոլորը երգը սովորում են մինչև վերջ, ապա մեկ խումբը երգը սկսում է երգել 1 թվանշանից մինչև վերջ, իսկ մյուս խումբը սկսում է երգել երբ 1-ին խումբը հասնում է 2 թվանշանին, այսինքն՝ չորս տակտ հետո: Այսպես ստեղծվում է երկվայն երգեցողություն:

Կան նաև եռավայն և քառավայն կանոններ:

Փորձե՛ք երգել եռավայն կանոն: Կատարման եղանակը նույնն է, ինչ՝ երկվայն կանոնի կատարումը:

Դասարանը բաժանվում է երեք խմբի, բոլորը սովորում են երգը սկզբից մինչև վերջ, որից հետո միայն երգում եռավայն:

ШЛА ВЕСЕЛАЯ СОБАКА

Сл. Н. Циклевоу
Муз. Е. Поплякова

1. Չափավոր

2.



Шла ве се ла я со ба ка, чик и бри ки, гаф!

3.




а за нее бе жа ли гу си, го ло вы зад рав.

А за ними попросенок,	Чики-брики, повтори-ка,
Чики-брики-хрю?	Что я говорю? Хрю?


1-ին խումբն սկսում է երգը, երբ հասնում է 2 թվանշանին՝ միանում է 2-րդ խումբը, որը երգն սկսում է սկզբից ու շարունակում երգել մինչև վերջ: Երբ 1-ին խումբը հասնում է 3 թվանշանին, մուտք է գործում 3-րդ խումբը, որը երգն սկսում է սկզբից և շարունակում երգել մինչև վերջ: Երգը վերջացրած խումբն սկսում է սկզբից: Երգ-կանոնն անընդմեջ կրկնվում է: Ընդհանրապես, երկվայն և եռավայն երգեցողության ունակության զարգացմանը շատ է օգնում երկվայն և եռավայն ռիթմական վարժությունների և կանոնների կատարումը:

Փորձե՛ք «Արև-արև» հայկական ժողովրդական երգի ռիթմը կատարել երկվայն ու եռավայն կանոնի ձևով: Աշակերտներին բաժանում եք երկու կամ երեք խմբի, յուրաքանչյուր խումբ կատարում է իրեն հատկացված ռիթմը, տարբեր տեմպ ունեցող «Բնական» կամ ռիթմական նվագարաններով:



Եռաձայն կանոնը կարելի է կատարել նաև ռիթմի վանկերով. «թա», «թի-թի»: Եռաձայն կամ քառաձայն կանոնի դեպքում հնարավոր է կատարել ռիթմի փոփոխություն:
Օրինակ՝


ԱՐԵՎ, ԱՐԵՎ



Կանոնի սկզբունքով կարելի է կազմակերպել նաև շարժումային կանոն.

- աշակերտները բաժանվում են երկու կամ երեք խմբի:


1-ին խումբը վազքով և քայլով ցույց է տալիս իմացած երգերից մեկի ռիթմը, մեկ կամ երկու տակտից հետո նույնը կատարում է նաև 2-րդ խումբը:



Քայլ քայլ, վազել, քայլ -

2-րդ խումբ

1-ին խումբը կատարում է իմպրովիզացված շարժումներ, 2-րդը կրկնում է մեկ կամ երկու տակտից հետո: Օրինակ.



ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՈՒՆԿՆԴՐՈՒՄԸ

Ունկնդրումն աշակերտների երաժշտական գործունեության կարևորագույն տեսակն է: Շատ կարևոր է, թե տարրական դասարաններում ինչ պատրաստվածություն են ստացել աշակերտները: Ըստ դրա՝ երաժշտության ուսուցիչը պլանավորում է իր աշխատանքները: Լսել և հասկանալ երաժշտությունը, նրա մասին մտորել և ունենալ սեփական կարծիք. ահա այն կարևոր կարողու-

թյունները, որոնց զարգացումն սկսվում է առաջին դասարանից և շարունակվում ուսումնառության բոլոր տարիներին:

Երաժշտությունը որպես զգայական, վերացական արվեստ, ունի իր յուրօրինակ «լեզուն»: Անհրաժեշտ է այդ «լեզուն» նախ սովորել, հետո միայն ունկնդրած երաժշտության մասին խոսել, կարծիք հայտնել: Խորհուրդ է տրվում նախքան երաժշտության ունկնդրումը դրա բնույթի և բովանդակության մասին ոչինչ չասել աշակերտներին: Յուրաքանչյուրը յուրովի է ընկալում և զգում երաժշտությունը: Բնականաբար, կարծիքները պետք է որ լինեն տարբեր:

Նախքան երաժշտության ունկնդրումն ուսուցիչը պետք է նպատակային հարցերի միջոցով աշակերտների լսողական ուշադրությունը կենտրոնացնի և ուղղի դեպի հնչող երաժշտությունը: Ունկնդրումից հետո շատ օգտակար է քննարկել լսածը, հնարավորություն տալ երեխաներին, որ հայտնեն իրենց կարծիքը, զգացողությունները, սովորենմտորել և ճիշտ ձևակերպել իրենց մտքերը:

5-րդ դասարանում երաժշտության ընկալման հնարավորությունները ավելի մեծ են: Աշակերտները կարողանում են լսել, ընկալել և մեկնաբանել ավելի բարդ երաժշտական ստեղծագործություններ:

Այս դասարանում ունկնդրվող ստեղծագործությունները շարունակում են զարգացնել սովորողների երաժշտական մտածողությունը՝ ապահովելով երաժշտական «լեզվի» տարրերի և արտահայտչամիջոցների ամբողջական ընկալումը:

Երաժշտական ստեղծագործության ընկալումը գիտակցական հիմքի վրա է դրվում այն ժամանակ, երբ երաժշտությունը դիտվում է արվեստի մյուս տեսակների հետ փոխհարաբերության և փոխներգործության մեջ: Արդյունքում ավելի են ակտիվանում սովորողների լսողական և տեսողական զգայարանները՝ նպաստելով արվեստի ստեղծագործություննե րում հնչյունների և գույների համագործակցությունը լսելուն և տեսնելուն, արվեստի ներգործության ուժն ավելի խոր զգալուն:

ԱՐՎԵՍՏԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈԽԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆԸ

Արվեստների փոխհարաբերությունների պարզաբանումը հնարավորություն է տալիս երաժշտության մեջ «տեսնելու» գունային կերպարներ, նկարի մեջ «լսելու» հնչյունային պատկերներ, պոեզիայում զգալու երաժշտական հնչերանգներ: Նման համալիր մոտեցումը ձևավորում է սովորողների ստեղծագործական միտքը և ճաշակը, որոնք անհրաժեշտ են յուրաքանչյուրին՝ անկախ մասնագիտությունից:

5-րդ դասարանցիները ծանոթանում են «Արվեստի տեսակների փոխկապվածությունը և փոխազդեցությունը» ընդհանուր թեմային: Նախ ուսուցիչն աշակերտներին ծանոթացնում է արվեստ հասկացությանը: Արվեստը դիտվում է որպես հոգևոր մշակույթ, անձի ձևավորման ու զարգացման անգնահատելի միջոց: Ցույց են տրվում արվեստի կրթադաստիարակչական, ճանաչողական, հաղորդակցական նշանակությունը, դերը սովորողների գեղագիտական ճաշակի զարգացման, գեղարվեստական արժեքները գնահատելու գործում: Ուսուցիչը պետք է օգտագործի արվեստի բարերար ներգործության ուժը՝ սովորողների մարդկային որակների, հույզերի, զգացմունքների գեղագիտական ապրումների ու պատկերացումների ձևավորման ու զարգացման գործընթացում:

Արվեստը մարդկային գործունեության հատուկ ձև է, որն իրականությունն արտացոլում է գիտակցության մեջ՝ գեղարվեստական պատկերների, կերպարների տեսքով: Արվեստում ձևը բխում է բովանդակությունից: Արվեստագետի գիտակցության մեջ բովանդակությունը դրվում է որոշակի ձևի մեջ, որպեսզի կերպարային, պատկերային մտահղացումը դառնա գեղարվեստական ստեղծագործություն: Օրինակ՝ որպեսզի կոմպոզիտորի մտահղացումը դառնա երաժշտություն, նա դիմում է երաժշտական «լեզվի» արտահայտչամիջոցներին՝ հնչյունների բարձրությանը, ռիթմին և այլ միջոցների: Բանաստեղծը դիմում է խոսքին, ռիթմին, հնչերանգին, նկարիչը՝ գծին, գույնին, պարողը՝ շարժումների պլաստիկային և այլն:

Արվեստի յուրաքանչյուր տեսակ ունի իր «լեզուն»: Հասկանալու համար պետք է տիրապետել այդ «լեզվի» տարրերին: Պետք է իմանալ, որ արվեստի ստեղծագործության մեջ ոչ միայն իրականության գեղարվեստական պատկերումն է, այլ նաև հեղինակի վերաբերմունքն ու զգացմունքները:

5-րդ դասարանում աշակերտներն ուսումնասիրում են երաժշտության փոխկապվածությունը գրականության, պարարվեստի, կերպարվեստի, թատրոնի և կինոարվեստի հետ: Ցույց են տրվում արվեստների և կյանքի միջև կապերի ընդհանրությունները:

Աշակերտներն իմանում են, որ երաժշտությունը արվեստների մեջ ամենակատարյալն է. ռիթմի շնորհիվ կարող է ոչ միայն շարժումային, այլև հուզագգայական լիցք հաղորդել արվեստի մեկ այլ տեսակի և նպաստել դրա արտահայտչականության զարգացմանը: Յուրաքանչյուր արվեստ յուրովի է արտացոլում իրականությունը, արվեստի տեսակները մեկը մյուսին լրացնում ու հարստացնում են:

Ըստ հույն փիլիսոփա Արիստոտելի՝ գրականությունը պատկերավոր կերպով արտացոլում է կյանքի դեպքերը և ապրումները, երաժշտությունն ընդօրինակում և արտահայտում է ապրումներ ու բարոյական որակներ, պարարվեստը պատկերում է կյանքը պլաստիկ շարժումներով և հաղորդում մարդկանց բնավորություններ, հոգեկան վիճակներ ու գործողություններ (17 – 115):

Ինչ վերաբերում է կերպարվեստին, ապա այն ընդօրինակում է առարկաները և արտացոլում իրեն բնորոշ եղանակներով և ձևերով:

Արվեստների ընկալման հարցում մեծ դեր ունեն լսողությունը և տեսողությունը: Տեսողական տպավորությունները հիմնականում կապված են տարածության, լսողական՝ ժամանակի հետ: Լսողական-ժամանակային արվեստ է երաժշտությունը, որի ստեղծագործություններն ընկալվում են որոշակի ժամանակի ընթացքում՝ լսողության միջոցով:

Կերպարվեստը, որի մեջ են մտնում գեղանկարչությունը, գրաֆիկան, քանդակագործությունը, համարվում է տեսողական-տարածական արվեստ: Կերպարվեստի տեսակները ընկալվում են միանգամից, ամբողջությամբ, տարածության մեջ՝ տեսողության միջոցով:

Արվեստի մյուս տեսակները՝ պարարվեստը, թատրոնը և կինոն, լինելով սինթետիկ տեսակներ, միաժամանակ պատկանում են թե՛ լսողական-ժամանակային, թե՛ տեսողական-տարածական արվեստների թվին: Գրականությունն այդ իմաստով ունի տարբեր դրսևորումներ. իբրև գրական երկ կապված է տեսողական ընկալման, իսկ իբրև արտասանական տեքստ՝ պոեզիա, թատերական պիես, լսողական-ժամանակային ընկալման հետ:

Ֆրանսիացի գրող և երաժիշտ Ռոմեն Ռոլանը գրել է. «Առանձին արվեստների սահմանները այնքան սահմանափակ ու բացարձակ չեն, ինչպես կարծում են որոշ տեսաբաններ: Արվեստներն ամեն վայրկյան վեր են ածվում մեկը մյուսին: Արվեստներից մեկն իր շարունակությունն ու ավարտն է գտնում մեկ այլ արվեստում» (21–5):

Արիստոտելը արվեստը դիտում էր որպես մայր բնության ընդօրինակում:

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Երաժշտությունը և գրականությունը թեման անցնելով՝ դպրոցականներն իմանում են, որ արվեստի տվյալ տեսակները իրար հարազատ են: Խոսակցական և երաժշտական «լեզուների» զարգացման օրինաչափությունները նման են իրար: Դրանց մեջ ընդհանուր տարրեր կան. ռիթմը, շեշտը, կարճ և երկար վանկերը՝ խոսքի մեջ, տևողությունները՝ երաժշտության մեջ, արագ և դանդաղ տեմպերը, ձայներանգը (տեմբրը), հնչերանգը (ինտոնացիան) և այլն: Առանց գրականության չէին լինի այնպիսի երաժշտական ժանրեր, ինչպիսիք են երգը, ռոմանսը, օպերան, կանտատը և երգչային այլ ստեղծագործություններ: Երեխաները գիտակցում են, որ երաժշտության և գրականության միասնությունից շահում է ոչ միայն երաժշտությունը, այլ նաև գրականությունը:

Երաժշտության ուղեկցությամբ գրական կերպարները դառնում են ավելի ցայտուն, ուժեղանում է մարդու վրա այդ կերպարների հուզական ներգործությունը: Երեխաները ուսուցման ընթացքում գալիս են այն եզրա կացության, որ խոսքն ունի երաժշտության պահանջ, իսկ երաժշտությունը՝ խոսքի: Պետք է հասնել նրան, որ աշակերտը երաժշտությունը ոչ միայն ականջներով լսի և հուզական արձագանք տա, այլ նաև «տեսնի աչքերով»: Գրական ստեղծագործությունը ոչ միայն կարող աչքերով և տեսնի կերպարը, այլ նաև մտքում լսի այդ կերպարի «արթնացրած» երաժշտությունը: Այս ձևով սովորողներին հասկանալի է դառնում, թե առանց երաժշտության և գրականության որքան աղքատ կլինեն կյանքը (24 – 11):

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՐԱՐՎԵՍՏԸ

Այս թեման անցնելով՝ սովորողներն իմանում են, որ արվեստի տվյալ տեսակները արտահայտչական հնարավորություններով նման չեն իրար, սակայն երկուսն էլ սնվում են միևնույն արմատից՝ ռիթմից: Ինչպես ռիթմի և հնչյունների միասնությունը ծնում է երաժշտությունը, այնպես էլ

ռիթմի և պլաստիկ շարժումների միասնությունից ծնվում է պարարվեստը: Առանց ռիթմի հնարավոր չէ երաժշտության և պարարվեստի գոյությունը: Պատահական չէ, որ երբ մարդը չի կարողանում միայն խոսքի միջոցով լիարժեք արտահայտել իր մտքերն ու հույզերը, դիմում է երաժշտության օգնությանը կամ պարային շարժումներին: Ռիթմը, հանդիսանալով

երաժշտության, գրականության և պարարվեստի «սիրտը», իր բաբախումներով կյանք է տալիս այդ արվեստներին և իմաստավորում դրանք: Եթե երաժշտությունը և խոսքը ձևավորվում են ժամանակի մեջ, ապա պարը՝ ժամանակի ու տարածության մեջ: Արվեստները միմյանց լրացնելով՝ կարողանում են արտահայտել մարդկային բազմապիսի զգացմունք ներ, տրամադրություններ, արտացոլել կյանքի երևույթներ:

Երեխաները ծանոթանում են ժողովրդական, դասական և կենցաղա յին պարերի տեսակներին, լսում պարային երաժշտություն և պարում:

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԵՐԱՐԱՐՎԵՍՏԸ

Այս թեման ավելի բարդ է, քանի որ երաժշտության և կերպարվեստի միջև ուղիղ կապեր՝ ինչպես գրականության, երաժշտության և պարարվեստի միջև, չկան: Պատճառն այն է, որ արվեստի վերոհիշյալ երեք տե սակների ընկալումը տեղի է ունենում որոշակի ժամանակի ընթացքում, իսկ նկարը դիտելիս դրա ընկալումը տեղի է ունենում որոշակի հարթության վրա և տարածության մեջ՝ միաժամանակ: Երաժշտությունը և կերպարվեստը իրարից տարբերվում են ոչ միայն բովանդակությամբ, էությամբ, այլ նաև արտացոլման եղանակով. երաժշտությունը դա անում է հնչյուններով, կերպարվեստը՝ գծով, գույնով: Երաժշտության և կերպարվեստի տարբերիչ առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ երաժշտության ստեղծումը կապված է կոմպոզիտորի և կատարողի հետ, իսկ կերպարվեստում նկարիչը և՛ ստեղծողն է, և՛ կատարողը (24 – 41):

Աստիճանաբար ծանոթանալով երաժշտության և կերպարվեստի ստեղծագործություններին՝ երեխաները տեսնում են, որ արվեստի այդ երկու տեսակները նույնպես ունեն նմանություններ, որոնք ավելի խոր քային են, անտեսանելի: Երկուսն էլ արվեստի ընտանիքի անդամ են, զգայական ներգործությամբ մարդու մեջ առաջացնում են որոշակի հույզեր ու տրամադրություն. մեկը՝ լսողության, մյուսը՝ տեսողության միջոցով: Երկուսի համար ընդհանուր է կյանքի երևույթների և մարդկային զգացմունքների արտացոլումը: Հոգեբանության մեջ կա հետևյալ երևույթը. «Երբ որևէ անալիզատորի վրա ադեկվատ գրգռիչով ազդում ես, մեկ այլ անալիզատորում տեղի է ունենում զգայության առաջացում: Օրինակ՝ լսողական զգայարանի վրա ձայների ազդեցության դեպքում մարդը կարող է ունենալ նաև տեսողական զգայություններ» (5–185): Այս օրինաչափությունը հնարավորություն է տալիս խոսել «ներքին լսողության» և «ներքին տեսողության» մասին: Այստեղից էլ բխում են այն հարցադրումները, որ առաջադրում ենք երեխաներին. «Կարելի՞ է երաժշտությունը «տեսնել» կամ գեղանկարը «լսել»»: Այս թեմաներն անցնելիս ուսուցիչը պետք է աշակերտներին հիշեցնի, թե կրտսեր դպրոցում ինչպես էին ունկնդրած երաժշտության ազդեցությամբ երևակայության մեջ «անտեսանելի» կերպարներ առաջանում, որ իրենք փորձում էին նկարել:

Ուսուցիչը պետք է կարողանա առաջին հերթին դասագրքի օրինակ ներով զգայական և գիտակցական դարձնել «լսողական» և «տեսողական» կերպարների իրողությունն այնպես, որ երեխաները երաժշտական ստեղծագործության մեջ մտովի «տեսնեն» այդ պահին չերևացող նկարչական պատկերներ, իսկ նկարի մեջ մտովի «լսեն» այդ պահին չհնչող երաժշտական կերպարներ: Այդ պատկերները և կերպարները երևակայության մեջ չպետք է առաջանան արհեստականորեն, այլ պետք է ծնվեն դիտած նկարի, լսած երաժշտության ազդեցությամբ: Շատ կարևոր է ճիշտ զարգացնել մտքի և երևակայության փոխադարձ կապը: Աշակերտները պետք է լսեն կամ կատարեն այնպիսի երաժշտական ստեղծագործություններ, որոնք պարունակում են կոնկրետ տեսողական կերպարներ, ասենք՝ բոլոր այն երգերը, որոնք երեխաները սովորում ու երգում են: Երգերում տեսողական կերպարներն առաջ են գալիս, որովհետև «նկարագրված» են երգերի տեքստում: Արվեստի ստեղծագործությունները հասկանալու համար գրական տեքստը «միջնորդի» դեր է կատարում: Սա երաժշտության մեջ պատկերներ տեսնելու մատչելի եղանակներից է:

Երաժշտության մեջ պատկերներ տեսնելու հաջորդ փուլը ծրագրա յին երաժշտության ունկնդրումն է, օրինակ՝ Ա. Սպենդիարյանի «Երեք արմավենին», Էդ. Գրիգի «Պեր Գյունտ» պոլիտը և այլն: Այդ ստեղծագործությունները ստեղծվել են որոշակի գրական տեքստի հիման վրա, և առանձին

մասերն ունեն համապատասխան անվանումներ, վերնագրեր, որոնք «հուշողի» դեր են կատարում:

«Երաժշտությունը տեսնելու» ընդունակության զարգացման դժվարին փուլը այն երաժշտական ստեղծագործության ունկնդրումն է, որը ծրագրային չէ, չունի գրական տեքստ, առանձին մասերը չունեն անվանումներ, այսինքն՝ կողմնորոշող տարր չկա: Այդ ստեղծագործությունները մերմտքի, երևակայության մեջ կարող են ստեղծել կյանքի հետ կապված զգայական կերպարներ, պատկերներ: Օրինակ՝ երբ լսում ենք Ա. Խաչատրյանի և Ա. Սպենդիարյանի ոչ ծրագրային ստեղծագործությունները, մեր ներքին լսողության մեջ հնարավոր է, որ արթնանան հայկական բնաշխարհի պատկերներ, հայ գեղանկարիչների նկարներ: Այս զգացողությունը ունենում ենք այն պատճառով, որ Ա. Խաչատրյանի և Ա. Սպենդիարյանի երաժշտության մեջ լսում ենք հայկական ժողովրդական երգեր, պարեր կամ առանձին հնչերանգներ, իսկ հայկական ժողովրդական երգերն անբաժան են հայկական բնությունից և հարազատ են հայ մարդուն:

Արամ Խաչատրյանի «Ջութակի կոնցերտը» գրված է ջութակի և սիմ ֆոնիկ նվագախմբի համար: Կոնցերտն ունի կարճ նախաբան, որը նվագում է միայն նվագախումբը: Առաջին մասի մեղեդին սկսվում է ջութակի նվագով, երգ-պարային բնույթի է, արագ տեմպով, հստակ ռիթմով, հիշեցնում է հայկական ժողովրդական «Քելե-քելե» երգի և «Քոչարի» պարի հնչերանգները: Երկրորդ մասը դանդաղ, քնարական երգի բնույթ ունի և հիշեցնում է «Անտունի» ու «Կռունկ» ժողովրդական երգերի հարուստ հուզաշխարհը: Երրորդ մասն ունի շատ արագ տեմպ. կարծես ուրախ, ժողովրդական տոնախմբություն է: Գլխավոր մեղեդին հիշեցնում է հայկական ժողովրդական «Վարդ կոշիկս» երգ-պարի հնչերանգները:

Այլ զգացողություն ենք ունենում, երբ լսում ենք Լ. Բեթհովենի, Պ. Չայկովսկու ստեղծագործությունները: Աշակերտները, հենվելով իրենց լսողական փորձի վրա, երաժշտության մեջ լսում և մտովի պատկերաց նույն են այն, ինչի մասին «պատմում» է երաժշտությունը: Ուրեմն՝ «տես նեղ» երաժշտությունը նշանակում է՝ թռիչք տալ երևակայությանը և մտքում պատկերացնել հնչող երաժշտության բնույթին, բովանդակությանը, ձևին համապատասխան պատկերներ: Երաժշտության մեջ կերպարներ, պատկերներ տեսնելու կարողությունն ավելի կգարգանա, երբ աշակերտներին ծանոթացնեք «Կարո՞ղ ենք «լսել» գեղանկարը» թեմային:

ԿԱՐՈ՞Ղ ԵՆՔ ԼՍԵԼ ԳԵՂԱՆԿԱՐԸ

Այս թեման երեխաների համար ավելի մատչելի է, քանի որ նախնա կան շրջանում ցուցադրում ենք այնպիսի նկարներ, որոնք պատկերում են նվագախմբեր, նվագախմբեր, երգչախմբեր, որոնք դիտելիս երեխայի ներքին լսողության մեջ կհնչի այդ նկարներին համապատասխան երաժշտություն: Այսպես է նկարը ծնում երաժշտություն: Մակայն ոչ մի այն իրերի, մարդկանց նկարներն են «հնչում» մեր ներքին լսողության մեջ, այլ նաև՝ բնության գեղեցիկ տեսարանները: Օրինակ՝ Մարտիրոս Մարյանի «Հոռովել» («Արագած») նկարը մեզ հուշում է, որ նկարիչն այն նկարելիս ոչ միայն տեսել է բնապատկերը, այլև «լսել» է նկարին համապատասխան երաժշտություն: Դիտելով այդ նկարը՝ հնարավոր է, որ երեխաները վերհիշեն նախորդ դասարաններում լսած «Կալի երգը» կամ նմանատիպ այլ երգեր:

Երաժշտության և կերպարվեստի մեկ այլ տարբերակիչ առանձնահատկությունն այն է, որ նկարիչը նկարի ստեղծման համար կյանքի երևույթների զարգացման ընթացքից ընտրում է մեկ պահ՝ տիպականը, կարծես թե «անշարժացնում է շարժման ակնթարթը»՝ դրա մեջ դնելով իր միտքը, զգացմունքներն ու տրամադրությունը: Կոմպոզիտորը երաժշտության ստեղծման համար օգտագործում է կյանքի հարափոփոխ երևույթները: Մեկ առանձնահատկությունն ևս. երաժշտությունը կարողանում է միևնույն ստեղծագործության մեջ արտահայտել տարբեր տրամադրություններ՝ ուրախությունից անցնել տխրության կամ դանդաղ շարժումից անցնել արագին: Իսկ կերպարվեստում հնարավոր չէ այդ շարժումը ցուցադրել, քանի որ նկարում պատկերներն անշարժ են, չեն փոխվում: Մակայն դա չի նշանակում, որ նկարում շարժում չենք գտնում:

Եթե խորամուխ լինենք պատկերվածի ներքին իմաստի, կերպարի էության մեջ, կտեսնենք, որ նկարիչն իր երևակայության ուժով նկարի անշարժ պատկերները կարողանում է կենդանացնել՝ դրանք «շարժման» մեջ դնելով այնպես, ինչպես տեսել է իրական կյանքում: Այսինքն՝ նկարիչը վարպետորեն կիրառելով գեղանկարչական «լեզվի» օրենքները՝ կարողանում է պատկերել շարժման դինամիկան: Օրինակ՝ երբ նայում ենք Մարտիրոս Մարյանի «Հոռովել» նկարին, թվում է, թե տեսնում և զգում ենք գյուղացու և եզների շարժումը, լսում ենք հոգնած մարդու և կենդանիների հնոցը, գութանի անիվի ճոռոցը: Մեր երևակայությունը կարծես թե գուշակում է, թե նկարիչը նախքան նկարելը ինչ է տեսել: Համոզվում ենք, որ նա իր մտահղացումները կարողանում է իրականություն դարձնել՝ դրանց հաղորդելով զգացմունքայնություն, շնչառություն, կենդանություն, որոնք էլ փոխանցվում են դիտողին: Իսկ վերջինս, որպեսզի

կարողանա «կարդալ» և հասկանալ նկարը, պետք է ունենա որոշակի պատրաստվածություն՝ գծի, գույնի, երփնագրի (կոլորիտի), հեռանկարի, ծավալի, կոմպոզիցիայի զգացողություն:

Երաժշտության և կերպարվեստի հիշյալ նմանությունները և տարբերությունները պայմանական են, քանի որ ոչ մի արվեստ մյուսին չի կրկնում և չի փոխարինում, դրանք լրացնում ու հարստացնում են միմյանց: Աշակերտներն արդեն գիտեն, որ երաժշտական ստեղծագործությունը լսելու և հասկանալու համար անհրաժեշտ է լսել սկզբից մինչև վերջ: Դա պահանջում է որոշակի ժամանակ: Այդ հատկության շնորհիվ է, որ երաժշտությունը դիտվում է որպես լսողական-ժամանակային արվեստ: Սակայն երաժշտությունը ժամանակային լինելով հանդերձ՝ ունի նաև տարածական հատկություն, ինչպես կերպարվեստը:

Երաժշտատեսական շատ գիտելիքներ և հասկացություններ ձեռք են բերվում միայն տարածական



միջավայրում՝ գրելու և ձեռքով ցուցադրելու միջոցով: Օրինակ՝ երաժշտական հնչյունների բարձրությունների, տևողությունների նոտագրումը, տեմպի, չափի և արտահայտչական այլ միջոցների նշումը, ձայնաստիճանների, ձեռքի նշանների պատկերումը, խմբավարումը և այլն: Դո մաժոր հնչյունաշարի ձայնաստիճանները գրված են որոշակի տարածության մեջ:

Մենք գիտենք նաև, թե ինչպես է տեղի ունենում գեղանկարի ընկալումը: Թվում է, թե գեղանկարը դիտելիս ամբողջ նկարը միանգամից տեսնում և հասկանում ենք: Բայց պահանջվում է ժամանակ՝ նկարի առանձին հատվածները ուշադիր դիտելու և հասկանալու համար: Դա նշանակում է, որ չնայած գեղանկարը տեսողական-տարածական արվեստ է, այնուամենայնիվ, լիարժեք հասկանալու համար անհրաժեշտ է ժամանակ, ինչպես երաժշտություն լսելու պարագայում: Այսպիսով, չնայած երաժշտությունը և կերպարվեստը տարբեր արվեստներ են, մեկը՝ ժամանակային, մյուսը՝ տարածական, այնուամենայնիվ, այդ արվեստների ստեղծագործությունները լսելու կամ դիտելու և հասկանալու համար պահանջվում են և՛ ժամանակ, և՛ տարածություն:

Երաժշտությանն ու կերպարվեստին հարազատացնում է նաև այն հանգամանքը, որ ստեղծագործությունը վերլուծելու և բնութագրելու համար որոշ դեպքերում օգտվում են միևնույն տերմիններից ու հասկա ցություններից: Դրանք են՝ ռիթմ, տոն, երանգ, գույն, զամմա, նրբերանգ, երփնագիր, ռելիեֆ, ֆոն, հակադրություն, էություն, անսամբլ և այլ: Օրինակ՝ ասում ենք «երաժշտական գույներ», «վառ երփնագիր», «տաք և սառը գույներ», «պայծառ մեղեդի» և այլն (4–5):

Երաժշտության մեջ ուժեղ հնչողությունը հաճախ համեմատվում է գեղանկարի ավելի վառ գույներով արտահայտված պատկերների հետ, իսկ մեղմ հնչողությունը՝ նկարի խորքային մասի հետ, որը պատկերված է ավելի աղուտ, անփայլ, մեղմ գույներով ու կարծես հիմնական նկարի լրացումը՝ ֆոնը (հետնախորքը) լինի (4–65):

Նվագակցության մասին երբեմն ասում են, թե երգի մեղեդու համար ծառայում է իբրև ֆոն: Հակադրության (կոնտրաստի) գաղափարը նույնն է թե՛ երաժշտության, թե՛ կերպարվեստի մեջ: Մենք գիտենք, որ հակադրությունների շնորհիվ է տեղի ունենում արվեստի ստեղծագործությունների զարգացումը: Կերպարվեստում առանց գծի, գույնի, ծավալի, տարածականության, լույսի և ստվերի հակադրության հնարավոր չէ գեղանկարի պատկերների ու մտքի ամբողջացումը: Նույնը երաժշտության մեջ է. առանց կարճ և երկար տևողությունների, բարձր ու ցածր հնչյունների, ուժեղ ու մեղմ հնչողության, արագ և դանդաղ տեմպերի, մաժոր և մինոր հնչյունաշարերի հակադրության հնարավոր չէ երաժշտության գոյությունն ու զարգացումը: Հակադրության շնորհիվ է, որ օպերայում, սիմֆոնիայում իրադարձությունները ծավալվում և զարգանում են:

Երաժշտության ու կերպարվեստի միջև կապեր ստեղծելով՝ ավելի ենք զարգացնում աշակերտների երաժշտալսողական և գունատեսողական պատկերացումները, ստեղծագործական երևակայությունը, գեղարվեստական ճաշակն ու կյանքի նրբերանգները ավելի լավ զգալու և հասկանալու կարողությունը:

«ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԹԱՏՐՈՆՈՒՄ ԵՎ ԿԻՆՈՅՈՒՄ»

Այս թեման անցնելով՝ աշակերտներն իմանում են, որ թատրոնը և կինոն բոլոր արվեստների միասնության արդյունք են:

Երաժշտության պես թատրոնը և կինոն նույնպես պահանջում են կատարում, դերասանական

խաղ: Մյուս արվեստները թատրոնում և կինոյում ուղեկցողի դեր են խաղում, հիմնականը խոսքն է ու դերասանական խաղը:

Արվեստի տեսակները միանալով խոսքին ու խաղին՝ կարողանում են արտահայտել մարդկային ամենանուրբ զգացմունքներից մինչև ամե նահգոր պոռթկումները, արտացոլել կյանքի բազմապիսի երևույթները: Աշակերտները համոզվում են, թե առանց երաժշտության որքան աղքատ կլինե՞ր թատրոնի և կինոյի հուզական ներգործությունը: Նրանք իմանում են նաև, որ երաժշտությունը, բացի հուզական լիցք հաղորդելուց, որոշակի շարժում է հաղորդում թատրոնում և կինոյում տեղի ունեցող իրադարձություններին ու դերասանական խաղին:

Թատրոնը և կինոն պատկանում են ժամանակային ու տարածական արվեստների թվին: Արվեստի այդ երկու տեսակների ու երաժշտության միջև կան ընդհանրություններ՝ ռիթմը, տեմպը, չափը, հնչերանգը և ար տահայտչական մյուս միջոցները, որոնք համաչափություն, հուզականություն, զգացմունքայնություն են հաղորդում դերասանների խաղին ու հանդիսատեսի ընկալմանը (16–497):

Թատրոնը և կինոն խմբային ստեղծագործության արդյունք են, մաս նակցում են գրողը (դրամատուրգը, սցենարիստը), ռեժիսորը, դերասանը, կոմպոզիտորը, նկարիչը, բալետմայստերը և այլք: Երաժշտությունը հնչյուններով արտահայտում է դրամայի կամ սցե նարի բովանդակությունը, ելությունը:

Թատրոնում դերասանն իր խաղով հարմարվում է երաժշտությանը, իսկ կինոյում երաժշտությունն է հարմարեցվում կադրերի շարժմանը: Այս ձևով երաժշտությունը կապվում է թատրոնի և կինոյի հետ, հարստացնում ու նպաստում թատրոնում և կինոյում դերասանական խաղի բովանդակության, արտահայտչականության ուժեղացմանը: Թատրոնում հանդիսատեսը ոչ միայն դիտորդ է, այլև դերասանների հետ գտնվում է հոգևոր կապի մեջ, հոգեպես մասնակցում ներկայացման ընթացքին, դերասանների հետ տիրում և ուրախանում: Հանդիսատեսի հուզազգայական լիցքն էլ իր հերթին հաղորդվում է դերասաններին, նրանց խաղը դարձնում ավելի արտահայտիչ: Թատրոնում արվեստի մյուս տեսակները նույնպես նպաստում են կերպարների բացահայտմանը և արտահայտչականության ուժեղացմանը:

Այս թեման անցնելիս ուսուցիչը պետք է կարողանա աշակերտների մեջ սեր ու հետաքրքրություն առաջացնել դեպի թատրոնը և կինոն: Աշակերտները պետք է արվեստի այդ երկու տեսակների և կյանքի միջև սերտ կապը տեսնեն:

Նման մոտեցումը զարգացնում է աշակերտների հուզաշխարհը, երևակայությունը, ստեղծագործական ընդունակությունները և գեղար վեստական ճաշակը:

Ամփոփենք. 5–րդ դասարանում աշակերտները ծանոթանում են երաժշտության, գրականության, պարարվեստ, կերպարվեստ, թատոն և կինո արվեստների փոխհարաբերությանը և փոխներգործությանը: Իմանում են, որ արվեստները չէին կարող կատարել իրենց դաստիարակչական, ճանաչողական դերը, եթե օժտված չլինեին մարդուն գեղագիտական բավականություն պատճառելու հատկությամբ: Սովորողները հասկանում են, որ արվեստների հետ բարեկամությունը մարդու համար դառնում է հոգեկան պահանջմունք, բերում ուրախություն, հոգևոր բավարարվածություն:

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՐՆ ՈՒ ՊԱՐԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

«Մարդկային կյանքի աչքի զարնող երևույթներից մեկն էլ պարն է: Պարն արտահայտում է յուրաքանչյուր ազգի բնորոշ գծերը, մանավանդ՝ բարքն ու քաղաքակրթության աստիճանը, որովհետև թեպետ մարդ պարում է ազատ կամքով, բայց մարմնի տեսակ–տեսակ շարժումներն ակամա մատնում են ներքինը» (1–51): Նշանակում է՝ ձեռքերի և մատների, գլխի և իրանի շար ժումներով կարելի է որոշել պարի ազգային պատկանելությունը:

Պարային շարժումները ժամանակի ընթացքում կատարելագործվել ու մշակվել են, ամփոփվել որոշակի պլաստիկ շարժումների ու գեղար վեստական ձևերի համալիրի մեջ՝ ստեղծելով յուրահատուկ «շարժու մային լեզու»:

Ձեռքերի պարային շարժումները, պլաստիկան, ժեստերը բացի գեղագիտական ազդեցությունից ունեն նաև իմաստային նշանակություն, արտահայտում են քնքշություն, նրբություն, սահունություն, թեթևություն, ծանրություն և այլն:

Այդ շարժումներն արտահայտում են կյանքի, կենցաղի այս կամ այն կողմերի, բնության երևույթների ազդեցությամբ առաջացած տրամադրություններ, իմաստավորում որոշակի գործողություններ՝ կապված շրջապատից ստացած տպավորությունների հետ:

ձեռքերի շարժումները կապված են նաև խոսքի, երգի, երաժշտու թյան հետ: Երբ մարդը խոսքի միջոցով չի կարողացել արտահայտել իր զգացմունքներն ու հույզերը, դիմել է ձեռքերի, մատների շարժումներին (պար, մնջախաղ, դիմախաղ): Դրանով կարծես լրացրել է տեսողական և զգայական գործոնների պակասը, հնարավորություն տվել խոսքին ավելի խոր արտահայտելու ամբողջական մտքեր՝ իրենց բազմապիսի նրբե բանգներով: Բսկ երբ ձեռքերի և մարմնի շարժումներին օգնության է հասել երաժշտությունը, ավելի է ուժեղացել դրանց զգայական ներգործությունը: Պատահական չէ, որ այդ երկու արվեստները ժամանակի ընթացքում մեկը մյուսին լրացնելով, զարգանալով՝ ստեղծել են պարերգեր, որոնք հայկական ազգային երաժշտության մեջ զգալի տեղ են գրավում:

«Հայ գեղջուկը իր զգացմունքներն արտահայտում է պարերգերի մի ջոցով՝ կատարելով դրանց բնույթին և բովանդակությանը համապատասխան ձեռքերի, մարմնի շարժումներ» (1–52):

Զարգացնելով պարի և երաժշտության կապը՝ մարդը ստեղծել է բա լետ, թատերականացված բեմական ժանրեր, որոնք պարային շարժման միջոցով արտահայտում են մարդկային տարբեր մտքեր, տրամադրու թյուններ, զգացմունքներ և հույզեր:

Կոմիտասն իր ուսումնասիրություններում հատուկ ուշադրություն է դարձրել պարին, նրա դաստիարակչական նշանակությանը, շարժում ների առանձնահատկություններին: Ս. Լիսիցյանը նկարագրում է, թե ինչ պայմանական շարժումներ են կատարվում պարերում: Այդ շարժումներն ընդունված է անվանել «ժեստերի լեզու»: Ժեստերը՝ ձեռքերի շարժումները, ունեն իրենց ձևը և բովանդակությունը: Դրանց միջոցով հնարավոր է դառնում արտահայտել ոչ միայն զգացմունքներ, այլև՝ մտքեր: Շարժումներն ու ժեստերը մարդկանց փոխհարաբերություններում միմյանց հասկանալու լավագույն միջոցներից են:

Պարային շարժումները կապված են նաև տվյալ ազգի բնակատեղի աշխարհագրական դիրքի, բնակլիմայական պայմանների, նույնիսկ տարազի հետ: Հարթավայրային շրջաններում պարային շարժումները կարծես ավելի լայն, ազատ ու տարածական են, իսկ լեռնային շրջանների պարերն ավելի զուսպ են ու հավաք:

Պարերի զարգացման վրա մեծ ազդեցություն է ունեցել ազգի կրոնա կան պատկանելությունը:

Բոլոր ժամանակներում պարերը կապված են եղել ծեսերի, սովորույթ ների, ավանդույթների, կենցաղի հետ: Շարժման միջոցով ցույց են տվել խմոր հունցելը, սանդ ծեծելը, թել մանելը, լեռ բարձրանալը, ձուկ որսալը, նույնիսկ անձրևոտ, ցեխոտ եղանակը և այլն: Այս բոլորը կատարել են ձեռքերի, մարմնի շարժումների միջոցով: Ազգագրական պարերում նշանակություն է ունեցել նաև պարային գծի ուղղությունը՝ դեպի աջ և ձախ:


Դեպի աջ են պարել հաջողության, ուրախության, լավ բերքահավաքի ժամանակ, իսկ դեպի ձախ պարել են անհաջողության, դժբախտության, երաշտի ժամանակ: Առաջներում եղել են նաև թաղման, սգո պարեր, որոնք նույնպես պարել են դեպի ձախ: Դեռ հեթանոսական շրջանում պարերը կատարում էին փակ շրջանով՝ ձեռքերը շղթայված, պարսպի նման, որպեսզի թշնամին կամ չար ոգիները չներխուժեն պարաշղթա:

Ազգագրական պարերում ձեռքերն ունեն որոշակի բռնելաձևեր: Յու ռաքանչյուր բռնելաձև խորհրդանշում է որևէ իմաստ:


Օրինակ՝ «Ճկույթ ճկույթի» բռնելաձևը խորհրդանշում է բարեկամու թյուն (10–26):




«Ուս ուսի»՝ նշանակում է հպարտություն, միասնություն, մեկը մյուսին թիկունք կանգնել:




«Բարև»՝ նշանակում է բարություն, հաջողություն, առատ բերքատվություն:



«Խաչձեռ»՝ նշանակում է խաչապաշտություն, ամրություն, մեկը մյուսին նեցուկ լինել:



«Խաչաձև հյուսված»՝ նշանակում է խաչապաշտություն. դրա միջոցով քրիստոնյաները պաշտպանվում են չար ոգիներից:




Հայկական պարերում աղջիկների և տղաների ձեռքերի դիրքերը տարբեր են լինում: Աղջիկների ձեռքերի շարժումներն ավելի փափուկ, սահուն, նրբագեղ են, իսկ տղաների շարժումներն ավելի առնական, խրոխտ, հստակ: Առանձնակի է աղջիկների դաստակի դիրքը, որը կոչվում է «Մարալիկ»: Պարելու ժամանակ այն գրեթե չի փոփոխվում, այլ կատարում է պտույտներ դեպի աջ կամ ձախ, բարձրացվում է կամ իջեցվում: «Մարալիկ» ձեռքի շարժման ժամանակ մատները նման են լեռնային եղջերուի (մարալի) եղջյուրներին:



«Երաժշտադիմական շարժում» գործունեությունը 5-րդ դասարանում նոր բովանդակություն է ստանում: Եթե տարրական դասարաններում սովորողները շարժումներ էին կատարում հիմնականում հնչած երաժշտության բնույթին, տեմպին, չափին, ռիթմին համապատասխան, պարում՝ մատչելի շարժումներով պարեր, ապա 5-րդ դասարանում սովորում են որոշակի պարային շարժումներ, ամբողջական պարեր՝ կապված ուսուցանվող երգերի և ունկնդրվող ստեղծագործությունների հետ: Օրինակ՝ «Կաքավի երգի» ուսուցումից հետո ուսուցիչը հարցնում է աշակերտներին, թե երգը ի՞նչ պարային շարժումներով կարելի է պարել: Աշակերտների պատասխանները մշակելով և ճշտելով՝ ուսուցիչը համոզիչ է դարձնում այն միտքը, որ՝ այո՛, «Կաքավի երգը» կարելի է պարել հայկական ժողովրդական պարերին բնորոշ շարժումներով (փոփոխա կան քայլ, զսպանակաձև քայլ, ձեռքերի դիրքերը՝ դաստակային պտույտներով): Եթե ուսուցիչը նկատում է, որ աշակերտները լավ չեն հիշում կրտսեր դպրոցում սովորած պարային շարժումները, ապա դասարանում մեկ անգամ ևս վերհիշում է անցածը:



«ԿԱՔԱՎԻ ԵՐԳԸ»

Աշակերտները կատարում են հայկական ժողովրդական պարային շարժումները (փոփոխական քայլ՝ իր տեսակներով. ուղիղ, խաչաձև): Քայլին ավելացվում են ձեռքերի շարժումները՝ տարբեր դիրքերով, դաստակային պտույտներով: Պարային շարժումները կարելի է կատարել տարբեր ուղղություններով, շրջանագծով՝ օգտագործելով անցումներ, պտույտներ:



Օրինակ՝ աշակերտները կանգնում են շրջանագծով՝ մեկը մյուսի դիմաց: Ոտքերը՝ առաջին ուղիղ դիրքում, աջ ձեռքը՝ 3-րդ դիրքում, ձախը՝ 2-րդ:

Կատարելով փոփոխական քայլ, փոխում են իրենց տեղերը, միննույն ժամանակ կատարում ձեռքերի դիրքերի փոփոխություն՝ դաստակային պտույտներով: Շարժումները կատարվում են երգի ռիթմին համապատասխան:





«ՔԱՄԱՆՉԱ»

1-8-րդ տակտերին աշակերտները կատարում են սովորական քայլ՝ ձգված թաթերի վրա՝ ուղիղ գծով: Աջ ձեռքը 1-ին դիրքում՝ դաստակը վեր բարձրացրած, ձախ ձեռքը 3-րդ դիրքում՝ դաստակը իջեցրած:




9-16-րդ տակտերին աշակերտներն առաջ գալով՝ աջ ոտքով խաչաձև քայլ են անում դեպի ձախ, ձախով՝ քայլ դեպի ձախ, աջով խաչաձև քայլ դեպի ձախ և ձախ ոտքը ուղիղ ձգած՝ դեպի աջ, ոտնաթաթը՝ հատակին, ձեռքերը 2-րդ դիրքում՝ դաստակները վեր բարձրացրած:



«ԱՄՊԻ ՏԱԿԻՅ»

Աշակերտները կանգնած են՝ ոտքերն 1-ին ուղիղ դիրքում, կուժն աջ ուսին դրված:

1-4 տակտերին պարողները ձգված ոտնաթաթերի վրա, մանր քայլերով, անկյունագծով շարժվում են առաջ: 4-րդ տակտին կուժը դնում են հատակին:



5–8–րդ տակտերին աջ ոտքով կատարում են քայլ դեպի աջ, ձախ ոտքը միացնում՝ կատարելով փոքր ծնկածալ: Այդքանը կրկնում են երկու անգամ:


Այնուհետև կրկնվում են 5–8–րդ տակտերի շարժումները, այս անգամ՝ ձախ ոտքով դեպի ձախ, որից հետո կատարում են պտույտ՝ հատակին դրված կծի շուրջը, աջ ու ձախ գնալով, ձախ ձեռքը՝ 2–րդ դիրքում, աջը՝ 6–րդ դիրքում, դաստակը՝ ներքև իջեցրած: Կծի շուրջը պտույտի ժամանակ ձեռքերը գտնվում են 1–ին դիրքում:



«ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՅԱՅԼԱ»

Աշակերտներն ազատ շարժումներով (իմպրովիզացիա), մանր քայլերով, պտույտներով, փոքրիկ թռիչքներով, ծաղկեպսակները ձեռքերին՝ պար գալով հավաքվում են կենտրոնում և կազմում շրջան: Պսակները դնում են գլխներին, ձեռք ձեռքի տված՝ շուրջպար են բռնում:

Աջ ոտքով՝ քայլ աջ, ձախ ոտքը հետևից անցկացնելով՝ կատարում ենք այլ դեպի աջ, ձախը՝ խաչաձև առջևից անցկացնելով դեպի աջ: Ձեռքերը բռնած վիճակում բարձրացնել վերև և իջեցնել ցած:



«ՊՍԱԿ–ՊՍԱԿ»


Նախապատրաստական դիրք. մեկ հաշվին բարձրանում են ոտնաթաթերի վրա և աջ ոտքով կատարում փոքր քայլ դեպի աջ, նույն հաշվի մեջ ձախ ոտքը միացնում են աջ ոտքին: Նույնը կրկնվում է: Երկու հաշվին կատարում են նույն քայլերը ձախ ոտքից՝ դեպի ձախ: Ձեռքերը 1–2–3–րդ դիրքերում կատարում են դաստակային պտույտներ: Շարժումը կարելի է կատարել տեղում և պտտվելով:

Վարժությունը սկսվում է նախապատրաստական դիրքից:

Մեկ հաշվին բարձրանալով թաթերի վրա աջ ոտքով կատարվում է 5 սմ–ոց քայլ՝ կողք, նույն հաշվին ձախ ոտքը մոտենում է աջ ոտքին՝ սահեցնելով գետնի վրայով:

Երկու հաշվին կրկին աջ ոտքով կատարվում է նույնատիպ քայլ աջ, նույն հաշվին ձախ ոտքով և թաթը ձգված վիճակում կատարելով գցում աջ ոտքի առջևում (ոտնաթաթը գետնից 10 սմ բարձրության վրա):

Ձեռքերը մեկ հաշվին բացվում են III դիրք և ամեն 1, 2, և 3, 4 հաշիվներին կատարվում




դաստակային պտույտ:

«ՆԱՐՈՅ»


Աշակերտները կազմում են կիսաշրջան, ձեռքերը ճկույթ ճկույթի բռնած՝ կրծքավանդակի դիմաց, արմունկները ծալված: Աջ ոտքով քայլ են անում դեպի աջ, ձախը միացնում աջին, միննույն ժամանակ կատարում զսպանակաձև շարժում (փոքր ծնկածալ): Նորից կրկնում են նույն քայլը: այս անգամ ձախ ոտքը միացնում են աջին՝ դնելով ոտնաթաթով, որից հետո ձախ ոտքով կատարում են քայլ դեպի ձախ, ապա կատարում շորոր՝ ձախ-աջ-ձախ, աջ ոտքը միացնում են ձախին՝ ոտնաթաթով:

Ամբողջ պարը կատարվում է զսպանակաձև շարժումներով:



«ՄԱՐԵՆ ԿՈՒԳԱ»

Աշակերտները կանգնած են՝ ոտքերն առաջին ուղիղ դիրքում, ձեռքերը՝ 4-րդ դիրքում: Կատարում են



կրունկով քայլ աջ ոտքից հերթափոխելով:

Որից հետո ձեռքերը բացում են 2-րդ դիրք, դեպի վեր ծալված դաստակներով: Աջ ոտքով՝ քայլ դեպի աջ, ձախը միացնում են: Նորից՝ աջով քայլ դեպի աջ, ձախը ծնկից ծալված բարձրացնում են և իջեցնում կրունկի վրա: Նույնը կրկնում են դեպի ձախ:



«ԹՈՂ ԼԱՐԵՆ ՋՈՒԹԱԿՆԵՐԸ»

(չեխական պոլկա)

Աշակերտները կանգնում են զույգերով՝ ձեռքերը բռնած (աղջկա՝ ձախը, տղայի՝ աջը): Աղջկա աջ ձեռքը բռնում է շրջագգեստ փեշը, տղայի ձախ ձեռքը 4-րդ կամ 7-րդ դիրքում է:

1-16-րդ տակտերի ընթացքում աշակերտները կատարում են պոլկայի շարժումը:


1-ին տակտի 1-ին մասում՝ թռիչք ձախ ոտքով, աջ ոտքը բարձրացրած, աջ ոտքով՝ քայլ առաջ:

2-րդ մասում ձախ ոտքը քայլով միացնում են աջին, աջ ոտքով՝ քայլ առաջ: Նույնը՝ մյուս ոտքով: 2-

րդ տակտի 1-ին մասում՝ թռիչք աջ ոտքով, ձախը՝ բարձրացրած, ձախ ոտքով՝ քայլ առաջ: 2-

րդ մասում աջ ոտքը քայլով միացնում են ձախ ոտքին, ձախ ոտքով՝ քայլ առաջ:

Աղջիկների ու տղաների հիմնական քայլերը նույնն են:



«ԱՂՋԻԿՆԵՐԻ ՊԱՐԵՐԳԸ»


Աշակերտները կանգնում են դեմ դիմաց՝ իրարից 3–4 մ հեռավորությամբ: Պարային շարժումներով մոտենում են միմյանց և անցնում:

1–6–րդ տակտերին կատարում են խաչաձև փոփոխական քայլ՝ կես պտույտներով (այսինքն՝ միմյանց նկատմամբ մեկ անգամ՝ դեմքով, մեկ անգամ՝ մեջքով), ձեռքերը 2–րդ և 3–րդ դիրքերում՝ հաջորդաբար փոխելով:

7–9–րդ տակտերին ձգվելով ոտնաթաթերի վրա, ձեռքերը՝ 3–րդ դիրքով, կա տարում են թեքում դեպի աջ, ապա ամբողջ մարմնով պտույտ՝ դեպի ձախ:

10–13–րդ տակտերին կատարում են նույն շարժումները, ինչ՝ 1–6–րդ տակ տերում:

14–16–րդ տակտերին կատարում են նույն շարժումները, ինչ՝ 7–9–րդ տակ տերում:



«ԶԵՎԱՎՈՐ ՎԱԼՍ»

Տղա-աղջիկ կանգնում են դեմ դիմաց՝ իրար ձեռք բռնած, կողմ բացված:

1–ին տակտ. ճոճվելով (բալանսե), պարային գծի ուղղությամբ, տղան՝ ձախ, աղջիկը՝ աջ:

2–րդ տակտ. ճոճվում են պարային գծի հակառակ ուղղությամբ:

3–րդ տակտ. տղան կատարում է ձախ ոտքից կես պտույտ ձախ, աղջիկը՝ աջ ոտքից կես պտույտ աջ:

4–րդ տակտ. կատարում են երկրորդ կես պտույտը:

5–8–րդ տակտեր. կրկնում են 1–4–րդ տակտերի շարժումները:

9–րդ տակտ. ճոճվում են առաջ՝ աջ ոտքից, տղայի և աղջկա ձեռքերը միա նում են վերևում:

10–րդ տակտ. ճոճվում են հետ, ձեռքերը առաջ ձգված:

11–րդ տակտ. կես պտույտ՝ աջ, տղան և աղջիկը տեղերով փոխվում են:

12–րդ տակտ. սահող քայլ դեպի հետ՝ ձախ ոտքից:

13–16–րդ տակտեր. կրկնում են 9–12–րդ տակտերի շարժումները:

17–24–րդ տակտեր. տղան կատարում է փոփոխական քայլ դեպի աջ, իսկ աղջիկը՝ վալսի

պտույտներ՝ տղայի աջ ձեռքի տակով:

25–32–րդ տակտեր. տղան և աղջիկը կատարում են վալսի պտույտ դեպի աջ:



«ՉԱ–ՉԱ–ՉԱ»

Լատինաամերիկյան պար

Երաժշտության չափը՝ 4/4: Կարելի է պարել զույգերով և առանձին:

Տղան.

1 հաշվին՝ աջ ոտքով քայլ դեպի աջ:

2 հաշվին՝ ձախ ոտքով քայլ առաջ՝ մարմնի ծանրությունը տեղափոխելով:

3 հաշվին՝ բարձրացնում և իջեցնում է (տեղում) աջ ոտքը՝ մարմնի ծանրությունը տեղափոխելով:

4 հաշվին՝ ձախ ոտքով քայլ դեպի կողք:

Ի հաշվին՝ մոտեցնել աջ ոտքը ձախին՝ առանց ոտնաթաթը շարժելու: 1 հաշվին՝ ձախ ոտքով քայլ դեպի կողք:

2 հաշվին՝ աջ ոտքով քայլ հետ՝ մարմնի ծանրությունը տեղափոխելով:

3 հաշվին՝ բարձրացնում և իջեցնում է (տեղում) ձախ ոտքը՝ մարմնի ծանրությունը տեղափոխելով:

4 հաշվին՝ քայլ աջ ոտքով դեպի կողք:

Ի հաշվին՝ ձախ ոտքը մոտեցնում է աջին՝ առանց ոտնաթաթը շարժելու:

Աղջիկը.

Կատարում է նույնը՝ մյուս ոտքից:



ՄՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Երաժշտական մտածողությունը լսողական պատկերացումների, լադային և ռիթմական զգացողության, երևակայության, հույզերի համալիր արտահայտությունն է, որն առաջանում է երաժշտությամբ զբաղվելու ընթացքում:

Արվեստը ստեղծագործական մտքի ու երևակայության ձևավորման և զարգացման լավագույն միջոցներից է: Որպես հոգևոր մշակույթ՝ անհատի մեջ կարող է ձևավորել ու զարգացնել զգացմունքները, հույզերը, զգայունակությունը, ուշադրությունը. հատկանիշներ, որոնք մարդուն դարձնում են նրբազգաց, նրբանկատ:

Այսօր արվեստը հանրակրթական դպրոցում ներկայացված է «Գրականություն», «Երաժշտություն» և «Կերպարվեստ» առարկաներով:

Երաժշտությունը յուրահատուկ տեղ ունի մարդու կյանքում: Երաժշտությունը և կյանքը ամուր կապված են միմյանց: Այդ կապն ավելի է իմաստավորվում, երբ երաժշտությունը մարդու միջոցով ներգործում է կյանքի վրա: Երաժշտության և կյանքի կապին սովորողները ծանոթանում են դեռ կրտսեր

դպրոցում: 5-րդ դասարանում այդ ծանոթությունը շարունակվում և նոր իմաստ է ստանում՝ կապվելով արվեստի այլ տեսակների հետ: Աշակերտները տեսնում են, որ ոչ միայն երաժշտությունն է կյանքի ծնունդ, այլ նաև արվեստի մյուս տեսակները: Արվեստը հասկանալ՝ նշանակում է իմանալ արվեստի «լեզուն» և արտահայտչական միջոցները: Այդ իմացությունն է, որ նպաստում է աշակերտների ստեղծագործական մտքի ու երևակայության ակտիվ զարգացմանը: Կրտսեր դպրոցում աշակերտներն արդեն իսկ զբաղվել են ստեղծագործական աշխատանքով, հորինել ոտանավորներ, մեղեդիներ, մատչելի երգեր, ռիթմական նվագակցություններ, որոնք այս կամ այն չափով զարգացրել են նրանց ստեղծագործական կարողությունները (2-67): 5-րդ դասարանում շարունակվում են այդ աշխատանքները, այս անգամ՝ արվեստների փոխկապակցվածությունն ուսումնասիրելու պայմաններում:

Ստեղծագործական աշխատանքը յուրաքանչյուր աշակերտի հնարավորություն է տալիս արտահայտելու իր տպավորություններն ու զգացմունքները՝ կապված ոչ միայն արվեստի տեսակների, այլ նաև իրական երևույթների հետ: Աշակերտների ստեղծագործական գործունեության ընթացքում ուսուցիչն ուղղորդողի դեր է կատարում, քանի որ յուրաքանչյուր երեխա, որպես անհատ, ունի ընդունակությունների, զգացմունքների և ընկալումների իր յուրօրինակ աշխարհը, որն անհատական մոտեցման և ճիշտ ձևավորման ու զարգացման կարիք ունի: Ուսուցիչը պետք է սովորողների ստեղծագործական մտքին ու երևակայությանը այնպիսի լիցք հաղորդի, որ երեխաները բացահայտեն իրենց ստեղծագործական կարողությունները: Երաժշտության դասն այդ հնարավորությունն ունի, քանի որ աշակերտները հանդես են գալիս և՛ որպես ունկնդիր, և՛ որպես կատարող: Երաժշտական գործունեության այդ երկու տեսակները լիցքավորում են միմյանց: Քանի որ ստեղծագործելը անհատական գործունեության ձև է, յուրաքանչյուրն իր ընդունակությունների, կարողությունների և երևակայության սահմաններում ստեղծագործում է յուրովի:

Մեկի ստեղծագործական լավ աշխատանքը կարող է վարակիչ լինել մյուսների համար: Անհրաժեշտ է, որ հնարավորինս շատ աշակերտների մեջ արթնացվի ստեղծագործական բերկրանքի զգացողությունը:

Աշակերտների ստեղծագործական մտքի ու երևակայության զարգացման գործնական աշխատանքները սկսվում են առաջին իսկ դասից: Նրանք երգում են, ունկնդրում, պարում, նվագում, պատասխանում ուսուցչի բազմաթիվ հարցերին:

Ստեղծագործական մտքի զարգացումը սկսվում է այն պահից, երբ աշակերտը սովորած երգը իր մեկնաբանությամբ կատարում է՝ հանդես բերելով կատարողական ինքնուրույնություն, ինքնատիպություն, երբ ունկնդրած երաժշտության մասին հայտնում է իր կարծիքը, տպավորությունները և մեկնաբանություններ է տալիս, հետևություններ անում: Այս աշխատանքներում աշակերտը հանդես է բերում ինքնուրույն դատելու կարողություն:

Աշակերտը ստեղծագործական ակտիվություն է ցուցաբերում, երբ ծանոթանում է արվեստի տեսակներին և դրանց փոխհարաբերությանը: Արվեստներից ստացած լսողական և տեսողական տպավորությունները նա ներկայացնում է խոսքի, երգի, նվագի, պլաստիկ շարժումների, գծապատկերների միջոցով:

Սովորողների ստեղծագործական մտածողության ու երևակայության զարգացման համար խորհուրդ է տրվում ուշադրություն դարձնել հետևյալ խնդիրների լուծման վրա զարգացնել.

- երաժշտությունն ուշադիր լսելու և հասկանալու կարողությունը,
- երաժշտության և արվեստի մյուս տեսակների կերպարային աշխարհների միջև կապեր

ստեղծելու կարողությունը,

• երաժշտական կերպարները կերպարվեստի գույներով «տեսնելու», իսկ կերպարվեստի պատկերները՝ երաժշտական միջոցներով «լսելու» կարողությունը,

- արվեստի տեսակների փոխկապակցվածությունը հասկանալու կարողությունը,
- միևնույն խնդրի մասին տարբերակված կարծիքներ լսելով՝ կողմնորոշվելու և սեփական

կարծիքը ձևավորելու կարողությունը,

- կյանքի և արվեստի տեսակների միջև կապեր տեսնելու կարողությունը,
- իրեն և ընկերներին բնութագրելու կարողությունը,
- միևնույն գեղարվեստական կերպարը արվեստի տարբեր տեսակների «լեզուներով»

բնութագրելու կարողությունը,

- տեքստ և մեղեդի, ապա՝ երգ, այդ երգի հիմքով՝ նկար և պար ստեղծելու կարողությունը:

Երաժշտության ուսուցչից պահանջվում է նպատակասլաց և հետևողական աշխատանք կատարել սովորողների ստեղծագործական ունակությունների զարգացման ուղղությամբ:

Օրինակ՝ «Երաժշտությունը և գրականությունը» թեմայի ուսումնասիրության ժամանակ աշակերտներին կարող են տրվել հետևյալ հարցերը.

- Երաժշտության և գրականության փոխկապակցվածությունից ի՞նչ նոր ժանրեր են ստեղծվում,
- ի՞նչ նմանություն ու տարբերություն ունեն արվեստի այդ երկու տեսակները,
- «Կերպարի» հասկացությունը երաժշտության և գրականության մեջ,
- ի՞նչ արտահայտչամիջոցներ ունեն արվեստի այդ երկու տեսակը,
- ի՞նչ կլինեք, եթե երաժշտությունը և գրականությունը «չհանդիպեին»: Տրվում են հետևյալ առաջադրանքները.

- հորինել ոտանավոր, ապա՝ մեղեդի, արդյունքում՝ երգ,
- կարդալ որևէ բանաստեղծություն և ընտրել համապատասխան երաժշտություն,
- երաժշտության ունկնդրումից հետո հորինել ոտանավոր կամ փոքրիկ պատմվածք,
- կազմակերպել երաժշտական–գրական հանդես:

Աշակերտները հարցերին պատասխանում են բանավոր, իսկ առաջադրանքները ներկայացնում՝ գրավոր: Հարցերի և առաջադրանքների պատասխաններից զգացվում է, թե յուրաքանչյուր աշակերտի ստեղծագործական միտքն ու երևակայությունը զարգացման ինչ աստիճանի են հասել:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ, ՆՈՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

Ամեն ժամանակաշրջան առաջ է քաշում ուսուցման և դաստիարակության իր պահանջները, մշակվում են նոր մոտեցումներ: Կրթությունը միշտ դիտվել է որպես մարդու զարգացումն ապահովող հիմնաքար: Պատահական չէ այն կարծիքը, որ կրթությունը շարժվում է զարգացման առջևից, վերջինս էլ ապահովում է կրթության և դաստիարակության առաջընթացը (8–197):

Ուսուցման ակտիվացման և արդյունավետության բարձրացման խնդիրը գտնվում է մանկավարժական մտքի ուշադրության կենտրոնում: XX դարի երկրորդ կեսին ձևավորվել է ամերիկացի հոգեբան–մանկավարժ Հովարդ Գարդների «Բազմաբնույթ մտածողության տեսությունը»: Ըստ այդ տեսության՝ մարդիկ տարբերվում են իրենց մտածողության բազմազանությամբ: Պետք է իմանալ, ճանաչել սովորողների մտածողության տեսակները, որպեսզի ճիշտ կազմակերպվի ուսուցման, զարգացման գործընթացը:

Գարդները կարծում էր, որ մարդուն հատուկ են մտածողության, ընկալման և իմաստավորման բազմապիսի ձևեր, ուսուցումը պետք է ուղղված լինի մարդուն հատուկ մտածողությունների բավարարմանը: Այսպիսի ուսուցումը հնարավորություն է ընձեռում աշակերտին յուրացնելու ուսումնական նյութը իր համար առավել հարմար եղանակով, միաժամանակ զարգացնում է նրա մտածողության այլ տեսակները: Ըստ Գարդների տեսության՝ ոչ թե աշակերտը պետք է հարմարվի ուսուցման առաջարկվող կաղապարին (մոդելին), այլ ուսուցման գործընթացը պետք է հարմարեցվի յուրաքանչյուր աշակերտի ուսումնառության հնարավորություններին և յուրահատկություններին (8–49):

Ըստ Գարդների՝ մտածողության հիմնական ձևերը յոթն են.

- լեզվական,
- տրամաբանական–տարածական,
- տեսողական–տարածական,
- մարմնաշարժողական,
- երաժշտական,
- միջանձնային,
- ներանձնային:

Գարդների տեսությունը մեկնաբանենք երեխաների երաժշտական դաստիարակության օրինաչափությունների տեսանկյունից:

Հանրակրթական դպրոցի երաժշտության դասն ունի համալիր կառուցվածք: Երաժշտության դասին երեխաները զբաղվում են երաժշտական գործունեության հետևյալ տեսակներով. երգեցողությամբ, երաժշտության ունկնդրմամբ, երաժշտառիթմական շարժմամբ, իմպրովիզացիայով և մանկական նվագարաններ նվագելով: Եթե ավելացնենք նաև, որ սովորողները երաժշտական գործունեության այդ հինգ տեսակներով զբաղվելիս յուրացնում են նաև երաժշտատեսական գիտելիքներ,

ապա հասկանալի է դառնում, որ մեր առաջարկած մեթոդը համահունչ է Գարդների մշակած՝ երեխաների բազմաբնույթ մտածողության տեսության դրույթներին: Դրանց կիրառումը երեխաների երաժշտական դաստիարակության և ուսուցման գործընթացում, անշուշտ, չափազանց արդյունավետ կարող է լինել:

Փորձենք կապեր տեսնել Գարդների բազմաբնույթ մտածողության տեսության և սովորողների երաժշտական բազմատեսակ գործունեության միջև:

- «Լեզվական-խոսքային մտածողությունը» որպես ուրիշին լսելու, հասկանալու, մտքեր արտահայտելու, հաղորդակցվելու, համագործակցելու միջոց, առկա է երաժշտության դասին: Այդ մտածողության արտահայտություններից են ուսուցչի խոսքը, երգերի ուսուցումը՝ խոսքի և երաժշտության միասնությունը, ունկնդրած երաժշտության մեկնաբանությունները, իմպրովիզացիան՝ ստեղծագործական մտքի խոսքային արտահայտությունները, աշակերտ-ուսուցիչ համագործակցությունը և այլն:

- «Տեսողական-տարածական մտածողությունը» երաժշտության դասին դրսևորվում է սովորողների երաժշտական գործունեության բոլոր տեսակներում և դիտողական պարագաներ ցուցադրելիս: Այդ պարագաներից են ուսումնամեթոդական գրականության ողջ համալիրը՝ երաժշտության դասագրքերը, դիտողական պարագաները, ինչպես նաև երաժշտաթիթմական շարժումները՝ պարը, ձայնագրությունները, երաժշտությունից ստացած տպավորությունները նկարի վերածելը և այլն:

- «Տրամաբանական-մաթեմատիկական մտածողությունը» և երաժշտությունը գտնվում են սերտ կապի մեջ: Օրինակ՝ երաժշտական հնչյունների տևողության զույգ բաժանման սկզբունքը, հնչյունաշարերի կառուցվածքը, տոն-կիսատոն սկզբունքով ինտերվալների կազմության թվային արտահայտությունը, երաժշտության չափը, տակտը, կառուցվածքը, ձևը և այլն: Այս բոլորի հիմքում մաթեմատիկական համաչափության օրինաչափություններն են:

- «Երաժշտական մտածողությունը» երաժշտական լեզվի օրինաչափությունները զգալու, ընկալելու, վերապրելու, ապա արտահայտելու կարողության դրսևորումն է:

- «Մարմնաշարժողական մտածողությունը» մարմնի շարժումներով երաժշտության բնույթը, բովանդակությունը, տեմպը, ռիթմը, կառուցվածքը, ձևը արտահայտելու կարողությունն է: Երաժշտության դասին կատարվող ցանկացած գործողության հիմքում շարժումն է, անկախ նրանից՝ երաժշտական է, թե ոչ:

- «Միջանձնային մտածողությունը» երաժշտության միջոցով հաղորդակցվելու, մարդկանց հետ շփվելու, նրանց մեջ հույզեր և զգացմունքներ արթնացնելու, ընդհանուրի տրամադրությունը զգալու, հասկանալու կարողությունն է, օրինակ՝ մեներգիչ-երգչախումբ, մենանվագող-նվագախումբ, ուսուցիչ-աշակերտ, աշակերտ-աշակերտ փոխհարաբերություններում:

- «Ներանձնային մտածողությունը» երաժշտության միջոցով ինքն իրեն ճանաչելու, սեփական զգայական աշխարհը, մտորումները, զգացմունքները, գաղափարները իմաստավորելու, դրանց հիման վրա նոր մտքեր, գաղափարներ ստեղծելու, զարգացնելու և արտահայտելու կարողությունն է: Նման մարդկանց թվին կարելի է դասել կոմպոզիտորին, երաժշտություն հնչեցնողին՝ կատարողին, ունկնդրին, քանի որ յուրաքանչյուր ոք երաժշտությունն ընկալում է յուրովի, իր մտածողության, զգացողության սահմաններում:

Բազմաբնույթ մտածողության տեսության կիրառումը երաժշտության դասերին կատարվում է սովորողների համագործակցային ուսուցման, անհատական և խմբային երաժշտական գործունեությունն ապահովող բազմապիսի աշխատանքներում (երգել, պարել, նվագել, ստեղծագործել, նկարել և այլն)՝ հենվելով աշակերտների անհատական, հոգեբանական առանձնահատկությունների, արժեքային կողմնորոշման կարողությունների վրա:

Երաժշտության դասին բազմատեսակ երաժշտական գործունեությունը նպաստում է.

- սովորողների բազմաբնույթ մտածողության զարգացմանը,
- համագործակցային ուսուցման արդյունավետության բարձրացմանը,
- ստեղծագործական մտածողության ու երևակայության զարգացմանը,
- աշակերտների բնածին ընդունակությունների ձևավորմանն ու զարգացմանը,
- միջանձնային շփմանը, հաղորդակցման ձևերի յուրացմանը, ուրիշի կարծիքի նկատմամբ հարգալից վերաբերմունքի մշակմանը, մտքերի փոխանակման և բանավիճելու կարողությունների զարգացմանը (խմբային համագործակցված աշխատանք),

- աշակերտների ներքին հնարավորությունների և մտավոր կարողությունների բացահայտմանը և զարգացմանը,

- միջառարկայական կապերի հաստատմանը:

Բազմաբնույթ մտածողության կիրառման մեթոդով աշխատող ուսուցիչը ոչ միայն ուսուցանում և դաստիարակում է, այլ նաև ակտիվացնում ու խթանում է սովորողների ինքնազարգացման ձգտումը՝ սովորեցնում է սովորել:

Որքան բարձր է ուսուցչի մասնագիտական կուլտուրան, այնքան բարձր է ուսուցիչ-աշակերտ երկխոսության արդյունքը:

ԴԱՍԻ ՊԼԱՆ

Դասի թեման. «Երաժշտությունը և գրականությունը»

Սովորել «Կաքավի երգը», խոսք՝ Հովհ. Թումանյանի, երաժշտ.՝ Կոմիտասի:

Ունկնդրել «Կաքավի երգը» լարային քառյակի կատարմամբ և «Վենետիկի գոնդոլավարի երգ» մանրանվագը, երաժշտ.՝ Ֆելիքս Մենդելսոնի:

Դասի նպատակը. «Երաժշտությունը և գրականությունը» թեմայի շրջանակում զարգացնել սովորողների ստեղծագործական մտածողությունը և երևակայությունը:

Դասի խնդիրները.

ա) ուսուցողական

- իմանալ երաժշտություն և գրականություն արվեստների առանձնահատկությունները, նմանությունները և տարբերությունները,

- իմանալ երաժշտության և գրականության միասնությունից ստեղծված երաժշտական ժանրերը,

- ծանոթանալ «Երգ առանց խոսքի» մանրանվագների պատմությանը,

- ծանոթանալ Կոմիտասի և Մենդելսոնի ստեղծագործական գործունեությանը

- խորացնել գիտելիքները «երգ» ժանրի վերաբերյալ:

բ) զարգացնող

- զարգացնել երաժշտության և գրականության փոխներգործության, գեղեցկությունը զգալու և ընկալելու կարողությունը,

- զարգացնել երաժշտության և գրականության արտահայտչամիջոցների տարբերությունը զգալու կարողությունը,

- զարգացնել ճիշտ շնչառությամբ, առողջությամբ և ձայնակազմությամբ երգելու հմտությունը,

- զարգացնել ունկնդրվող երաժշտության բնույթը, կառուցվածքը զգալու և ինքնուրույն վերլուծելու կարողությունը,

- զարգացնել պոեզիայի, գեղարվեստական խոսքի, երաժշտության բնույթին, չափին, ռիթմին համապատասխան՝ ձեռքերի, մարմնի շարժումներ կատարելու կարողությունը,

- զարգացնել քառատող տեքստ և մեղեդի հորինելու, ապա երգ ստեղծելու կարողությունը,

- զարգացնել բազմաձայն ռիթմական նվագակցություններ ստեղծելու և նվագակցելու կարողությունը:

գ) դաստիարակչական

- երաժշտական և գրական ստեղծագործությունների միջոցով աշակերտներին դաստիարակել հայրենասիրական ոգով,

- ուսուցվող երգերի միջոցով դաստիարակել կիրթ և գեղեցիկ երգելու հմտություն,

- դասին հնչող երաժշտության միջոցով դաստիարակել գեղագիտական ճաշակ,

- ամրապնդել խմբով աշխատելու առավելության զգացողությունը,

- դաստիարակել դասական երաժշտություն լսելու ցանկությունը:

Դասի ավարտին սովորողները.

- կիմանան երաժշտության և գրականության փոխկապվածության, փոխներգործության շնորհիվ ստեղծված արժեքները,

- կկարողանան ունկնդրած երաժշտությունը վերլուծել և ինքնուրույն կարծիք հայտնել,

- երաժշտության և գրականության կապի մասին կունենան սեփական կարծիք,

- կկարողանան ճիշտ շնչառությամբ և առողջանությամբ արտահայտիչ կատարել սովորած երգը,
- կհմանան՝ ինչպես կարելի է ստեղծել երգ:

Դասի կահավորումը. նվագարաններ (դաշնամուր, ջութակ, ակորդեոն, շվի, մետաղաֆոն), ռիթմական նվագարաններ (թմբուկ, դափ, եռանկյունի, ծնծղաներ), ուսումնամեթոդական գրականություն (դասագրքեր, մեթոդական ուղեցույցներ, պլակատներ, ձայնագրություններ՝ CD, տեսալսողական սարքեր և այլն):

Տերմիններ, հասկացություններ՝ գրված գրատախտակին. արվեստ, ժանր, մանրանվագ, գոնդոլ, քառյակ (կվարտետ):

Դասի կառուցվածքը.

- կազմակերպական,
- նոր նյութի ներկայացում՝ ստեղծագործական մտածողության զարգացման ուղղվածությամբ (խթանման փուլ),
- նոր նյութի բացատրում (իմաստի ընկալում),
- նոր նյութի ամրակայում (կշռադատում),
- գնահատում:

Գործունեության տեսակները.

- սովորողների երաժշտական գործունեության յուրաքանչյուր տեսակին տրվում է ստեղծագործական ուղղվածություն,

- երգի ուսուցում,
- ունկնդրում,
- երաժշտառիթմական շարժում,
- իմպրովիզացիա,
- ռիթմական նվագակցություն:

Երաժշտական գործունեության տեսակները ուսուցիչը կարող է կապել բազմաբնույթ մտածողության տեսության սկզբունքներին:

Ուսուցման մեթոդները.

խոսքային, տեսալսողական, զննական, հարց ու պատասխանի, քարտեզագրում, մտազրոհ, համեմատության, Վենի դիագրամ, ինտերակտիվ զրույց, Խիկ, վերլուծում, ամփոփում:

Դասի ընթացքը.


1. Խթանման փուլում պարզաբանվում են արվեստների փոխկապակցվածությունը և փոխազդեցությունը: Սովորողները ծանոթանում են «արվեստ» հասկացությանը, արվեստի տեսակներին, ապա ներկայացվում է «Երաժշտությունը և գրականությունը» թեման (տե՛ս դասագիրքը): Խթանման փուլում խոսվում է երաժշտության և գրականության փոխկապակցության և փոխազդեցության մասին: Կիրառվում է «Մտավոր գրոհ» կամ «Մտքերի տարափ» մեթոդը, որը հնարավորություն է տալիս աշակերտին ազատ, անկաշկանդ, ինքնուրույն արտահայտելու մտքերը՝ առանց անհանգստանալու, թե այդ մտքերը կարող են ոչ ճիշտ լինել: Անկաշկանդ մթնոլորտի պայմաններում զարգանում են աշակերտի ստեղծագործական մտածողությունը և երևակայությունը:

Գրատախտակի կենտրոնում շրջանագծի մեջ գրվում է «արվեստ» բառը: Աշակերտները արվեստի մասին իմացածը գրում են գրատախտակին՝ «արվեստ» բառի շուրջը (8–87):

Երբ բոլորի մտքերը գրի են առնվում գրատախտակին, հաղորդվում է դասի նյութը: Ամբողջ դասարանով քննարկում են առաջադրված նոր նյութը, զաղափարները, դրանք համեմատում աշակերտների մտքերի հետ, կատարվում են ուղղումներ, անհրաժեշտության դեպքում՝ լրացումներ, քննարկվում են անհամաձայնությունները: Ուսուցիչը բացատրում է երեխաներին, որ գեղանկարչությունը (նկարը) կերպարվեստի մասն է կազմում, որ բալետը, ժողովրդական պարը, կենցաղային և պարահանդեսային պարերը պարարվեստի ճյուղերն են, որ երգը երաժշտական արվեստին է պատկանում և այլն: Այս մեթոդի հիմնական նպատակը աշակերտների ուշադրությունը դասին հաղորդվելիք նոր նյութի վրա կենտրոնացնելն է, նոր գաղափարներ «հայտնաբերելը»:


«Չկա ավելի վտանգավոր բան, քան այն միտքը, որը միակն է», «Լավ մտահղացումներ ունենալու լավագույն ձևը շատ մտահղացումներ ունենալն է», այս ասույթների իմաստը պետք է հասկանալի լինի աշակերտներին (8–89): Այս մեթոդը զարգացնում է ստեղծագործական մտածողությունը և երևակայությունը: Առհասարակ, ուսուցման ընթացքում շատ օգտակար և արդյունավետ է գրաֆիկական պատկերների և գծանկար–սխեմաների կիրառումը: Տեսողական ազդեցության շնորհիվ տպավորիչ է

դառնում ուսուցչի բացատրությունը: Օրինակ՝ տարբեր արվեստների կապը և փոխներգործությունը, որին նվիրված է 5-րդ դասարանի ծրագրային նյութը, կարելի է ներկայացնել հետևյալ գծանկարի միջոցով: Սլաքները ցույց են տալիս կապերի միակողմանի, երկկողմանի կամ բազմակողմ լինելը:



2. Իմաստի ընկալում փուլում թեմայի հիմնավորման նպատակով ուսուցանվում է «Կաքավի երգը», ապա այն ունկնդրում են լարային քառյակի կատարմամբ: Այնուհետև աշակերտները լսում են Ֆելիքս Մենդելսոնի «Երգ՝ առանց խոսքի» ժողովածուից «Վենետիկի գոնդոլավարի երգը» մանրանվագը: Կատարում են լսողական համեմատություններ, հայտնում կարծիքներ, մտքեր:

Հարմար է կիրառել «Վենի դիագրամը»: Այդ մեթոդը կառուցվում է երկու կամ ավելի շրջանագծերով, որոնք կենտրոնում հատման որոշակի մակերես ունեն: Այս դիագրամն օգտագործվում է մտքերը կամ կերպարները միմյանց հակադրելու կամ դրանց ընդհանրությունները ցույց տալու համար: Այս մեթոդով երաժշտության և գրականության նմանությունը, տարբերությունը և ընդհանրությունը դառնում են տեսանելի: Նմանությունը. երկուսն էլ արվեստի տեսակ են, տարբերությունը՝ մեկը խոսքային արվեստ է, մյուսը՝ հնչյունային: Երկուսի համար ընդհանուր են ռիթմը, հնչերանգը: Այն, ինչ ընդհանուր է, գրվում է երկու շրջանագծերի հատման մասում:



3. Կշռադատման փուլում ունկնդրած երաժշտության մասին կարծիքները, մտքերը ամփոփվում են: Հարմար է կիրառել «Մտքի քարտեզագրում» մեթոդը: Ներկայացված՝ «Երաժշտություն և գրականություն» թեման մասնատվում և դասակարգվում է նշված մեթոդով՝ վերհանելով երկու արվեստների փոխկապվածության և փոխներգործության արդյունքը:

Դասն ավարտվում է «Կաքավի երգի» խմբական կատարմամբ:
Տնային հանձնարարություն.

Տեսրի մեջ գրել, թե երաժշտության և գրականության փոխկապվածությունից և փոխազդեցությունից ի՞նչ ժանրեր են առաջանում: Այդ ժանրերից ո՞րն է քեզ համար սիրելի, ովքե՞ր են քո նախընտրած ժանրի ամենասիրելի ստեղծագործության տեքստի և երաժշտության հեղինակները:

ԴԱՍԻ ՊԼԱՆ

Դասի թեման. «Երաժշտությունը և կերպարվեստը»

Սովորել «Կռունկ Հայաստանի» երգը:

Ունկնդրել կոմպոզիտոր Ղազարոս Սարյանի «Հայաստան» սիմֆոնիկ պաննոն:

Դիտել նկարիչ Մարտիրոս Սարյանի «Հայաստան» պաննոն (տե՛ս դասագիրքը):

Դասի նպատակը. «Երաժշտությունը և կերպարվեստը» թեմայի շրջանակում զարգացնել աշակերտների ստեղծագործական մտածողությունը և երևակայությունը:

Դասի խնդիրները.

ա) Ուսուցողական

- կատարելագործել երաժշտության և կերպարվեստի արտահայտ չափանիշների միջոցների իմացությունը,

- տարբերակել «կերպար» հասկացությունը երաժշտության և կերպարվեստի ստեղծագործություններում,

- կարողանալ երաժշտական և կերպարվեստի «լեզուների» միջև փոխկապեր գտնել,

- «Կռունկ Հայաստանի» երգը կատարել արտահայտիչ, փորձել այն ներկայացնել կերպարվեստի «լեզվով»,

- կարողանալ տեսնել և լսել Մարտիրոս Սարյանի և Ղազարոս Սարյանի «Հայաստան» պաննոնները, հայրենիքի գովքն արտահայտող տարրերի բացահայտման միջոցով կապեր փնտրել արվեստի այդ երկու ստեղծագործությունների միջև:

բ) Զարգացնող

- զարգացնել լսատեսողական զգայարանների կապը երաժշտության և կերպարվեստի ստեղծագործությունների վերլուծության միջոցով, զարգացնել երաժշտական և կերպարվեստի ստեղծագործություններում, հուզագգայական ոլորտն ընկալելու կարողությունը,

- զարգացնել ստեղծագործական մտածողությունն ու երևակայությունը երաժշտության և կերպարվեստի փոխադարձ կապը բնութագրելու միջոցով,

- փորձել երաժշտության բնույթն արտահայտել նկարով, իսկ նկարից ստացած տպավորությունների հիման վրա ստեղծել բառեր ու մեղեդի,

- զարգացնել երկձայն արտահայտիչ երգեցողության հմտությունը,

- զարգացնել բազմաձայն ռիթմական նվագակցություն ստեղծելու կարողությունը:

գ) Դաստիարակչական

- զգացմունքային արձագանք տալու ընդունակություն զարգացնել, գեղարվեստական ճաշակ մշակել,

- դաստիարակել որոնողական կարողություններ,

- դաստիարակել երկձայն արտահայտիչ երգելու հմտություն,

- արվեստի ստեղծագործությունների միջոցով դաստիարակել հայ բենասիրական զգացմունքներ:

Դասի ավարտին սովորողները կկարողանան.

- հնչող երաժշտության մեջ «տեսնել» գեղարվեստական պատկերներ, գեղանկարի մեջ «լսել»

երաժշտական կերպարներ,

- ձեռք բերած լսողական և տեսողական փորձի հիման վրա ստեղծել մեղեդիներ և նկարներ,

- լսել, տեսնել և հասկանալ երաժշտական և կերպարվեստի ստեղծագործություններ և

կարողանալ կարծիք հայտնել,

- լսողությունը նախապատրաստել բազմաձայն երգեցողության,

- ստեղծել ռիթմական բազմաձայն նվագակցություններ:

Դասի կահավորումը. նվագարաններ՝ մեղեդային և ռիթմական,

երաժշտության դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ, նկարներ, ձայնագրություններ (CD, տեսալսողական սարքեր և այլն):

Տերմիններ, հասկացություններ՝ գրված գրատախտակին. գոբելեն, վին, երաժշտությունը «տեսնել», նկարը «լսել», տեմբո–գույն–երանգ, պաննո, նրբերանգ:

Դասի կառուցվածքը.

- կազմակերպչական,
- նոր նյութի ներկայացում (խթանման փուլ),
- նոր նյութի բացատրում (իմաստի ընկալում),
- նոր նյութի ամրակայում (կշռադատում),
- գնահատում:

Գործունեության տեսակները.

- երգի ուսուցում. երկվայն երգեցողության արտահայտիչ կատարում,
- պատկերային երաժշտական ստեղծագործությունների ունկնդրում,
- երաժշտափոփական նվագակցություններ,
- ստեղծագործական կարողությունների զարգացում,
- կերպարվեստի և երաժշտական ստեղծագործությունների վերլուծություն:

Ուսուցման մեթոդներ. խոսքային, տեսալսողական, զրույց, շրջագայություն պատկերասրահում, համերգի ունկնդրում և քննարկում (պատկերասրահի դիտումը և համերգի ունկնդրումը կարելի է իրականացնել դասի ընթացքում տեսալսողական սարքերի օգնությամբ), բազմապունակ աղյուսակներ (T-աձև, m-աձև), մտազրույց, պրիզմա, վերլուծություն, ամփոփում:

Դասի ընթացքը.

1. Խթանման փուլում ներկայացվում է «Երաժշտություն և կերպարվեստ» թեման: Երաժշտությունն ու կերպարվեստը դիտարկվում են որպես արվեստի տարբեր տեսակներ, առանձին-առանձին քննարկվում, ապա առաջարկվում է գտնել դրանց նմանությունները, ընդհանրությունները: Առաջարկվում է օգտագործել «պրիզմա» դիդակտիկ մեթոդը: Ուսուցչի այն հարցին, թե ինչի՞ տեսակներ են երաժշտությունը և կերպարվեստը, պատասխանը լինում է՝ արվեստի տեսակներ: Հարցադրումը շարունակվում է. որո՞նք են դրանց առանձնահատկությունները, արտահայտչական միջոցները, ներգործության ուժը: Երաժշտությունը՝ կերպարներով, կերպարվեստը՝ պատկերներով, զգայական ներգործություն են ունենում անհատի վրա, առաջ բերում հույզեր, տարբեր տրամադրություններ: Դա երաժշտության և կերպարվեստի նմանությունն է, ընդհանրությունը: Այս մտքերը «պրիզմա» մեթոդով պետք է տեսանելի դարձնել աշակերտներին կամ հանձնարարել, որ աշակերտները «Պրիզմա» մեթոդը հնարավորություն է տալիս աշակերտներին ազատ ու անկաշկանդ մտորել առաջադրված թեմայի շուրջ: Հիմնական նպատակը թեմայի վերաբերյալ աշակերտների ենթագիտակցական շերտերում եղած կապերի վերհանումն ու արձանագրումն է:

«Պրիզմա» մեթոդը կիրառվում է դասի սկզբնական, խթանման փուլում՝ ապահովելով աշակերտների ակտիվությունն ու հետաքրքրությունը, կապ հաստատելով աշակերտների ունեցած գիտելիքների ու պատկերացումների և ուսուցվող նոր թեմայի միջև: Մեթոդն արդյունավետ է, եթե կիրառվում են համառոտ բառեր, հասկացություններ: Պահանջում է արագ կողմնորոշում, ուշադրության կենտրոնացում, համաձայնեցված գործողություններ: Այդ մեթոդով ուսուցումը անց է կացվում անհատական եղանակով կամ խմբերով (4-8-հոգանոց): Խմբով աշխատելիս հաշվի են առնվում նաև անհատական կարծիքները, որոնք միավորվում են ընդհանուր կարծիքի մեջ: Խմբերը ներկայացնում են իրենց կարծիքները, քննարկում երաժշտության և կերպարվեստի նմանություններն ու տարբերությունները: Խմբերի վերջնական կարծիքները ներկայացվում են ուսուցչին: Ապա ամբողջ դասարանով քննարկվում և ամբողջացվում է թեմայի վերաբերյալ վերջնական կարծիքը:

Ամփոփելով՝ աշակերտներին տրվում են հետևյալ հարցերը.

- Ի՞նչ զգացում ունեիք մենակ աշխատելիս:
- Որո՞նք են խմբով աշխատելու առավելությունները:
- Խմբով աշխատելիս արդյո՞ք բոլորն էին մասնակցում քննարկմանը (տե՛ս դասագիրքը):

2. Իմաստի ընկալման փուլում սովորողներն ունկնդրում են «Հայաստան» սիմֆոնիկ պաննոյից

հատվածներ և անցնում մտքերի փոխանակմանը: Նպատակահարմար է կիրառել «Այցելություն պատկերասրահ և համերգասրահ» և «Վենի դիագրամ» մեթոդները: Պետք է պահպանել սովորողների ակտիվությունը, հետաքրքրությունը: Կարևոր է կապ ստեղծել նոր նյութի և հնի միջև, ստեղծել իմացական նոր կառույց (8–97):

Նոր նյութի ունկնդրումը կարելի է իրականացնել տարբեր ձևերով:

Դիտել «Հայաստան» պաննոն, ապա լսել «Հայաստան» սիմֆոնիկ պաննոն: Հնարավոր է, որ սկզբից լսեն երաժշտությունը, հետո դիտեն նկարը: Կարևոր է իմանալ երկու արվեստների առանձնահատկությունները և արտահայտչական միջոցները, որպեսզի հնարավոր լինի փոխկապվածության եզրեր գտնել երաժշտական և կերպարվեստի ստեղծագործությունների միջև: Այս փուլում ուսուցվում է նաև «Կռունկ Հայաստանի» երգը, ապա համեմատության մեջ է դրվում նկարի և սիմֆոնիկ ստեղծագործության հետ:

Նպատակահարմար է կիրառել «Այցելություն համերգասրահ և պատկերասրահ» մեթոդը: Նպատակն է թեմայի շուրջ տեղեկություններ հավաքագրել, մշակել, նոր գաղափարներ արտահայտել, զարգացնել դիտելու և լսելու կարողությունը, ինքնուրույնությունը, ստեղծագործական մտածողությունը:

Ուսուցիչը նախօրոք պայմանավորվում է Մարտիրոս Սարյանի տուն–թանգարանի ղեկավարության հետ, աշակերտներին տանում է թանգարան: Նրանք դիտում են ոչ միայն «Հայաստան» պաննոն, այլ նաև Մարտիրոս Սարյանի մյուս կտավները և ստանում համապատասխան տեղեկություններ:

Աշակերտները դիտում են նկարները և իրենց տեսրում կատարում որոշ գրառումներ ստացած հուզական տպավորությունների մասին:

Նույն սկզբունքով ուսուցիչը կազմակերպում է Ղազարոս Սարյանի «Հայաստան» սիմֆոնիկ պաննոյի ունկնդրումը համերգասրահում կամ ձայնագրության ունկնդրումը դասարանում:

Վերջում ուսուցիչը հանձնարարում է աշակերտներին ցուցահանդեսից և համերգից ստացած տպավորությունները գրի առնել ակնարկի տեսքով և կարդալ դասարանում:

Երբ դիտում են «Հայաստան» պաննո–նկարը, լսում «Հայաստան» սիմֆոնիկ պաննոն, ապա սովորում «Կռունկ Հայաստանի» երգը, ուսուցչի այն հարցին, թե ի՞նչ նմանություն և տարբերություն են տեսնում այս երեք ստեղծագործությունների միջև, աշակերտներն իրենց մտքերը գրում են աղյուսակի համապատասխան մասում:

«Հայաստան» պաննո–նկար	«Հայաստան» սիմֆոնիկպաննո	«Կռունկ Հայաստանի» երգ
1. արևային գույներ 2. պատկերների բազմազանություն 3. գյուղական պատկերներ 4. բաց գույներ	1. պայծառ հնչողություն 2. հնչողության բնույթի բազմազանություն 3. ժողովրդական մեղեդիներ 4. արտահայտիչ երաժշտություն	1. քնարական հնչողություն 2. շարժունություն 3. գեղեցիկ երկձայնություն 4. կարոտի զգացում

Աշակերտները գալիս են այն համոզման, որ երեք ստեղծագործությունները տարբեր արտահայտչամիջոցներով գովերգում են Հայաստանի գեղեցկությունը, արտահայտում հայ մարդու զգացմունքները և հույզերը հայրենիքի հանդեպ:

3. Կշռադատման փուլում աշակերտը յուրացնում է նոր նյութը՝ հարմարեցնելով իր ունեցած գիտելիքներին, լսողական փորձին:

Նրա մեջ տեղի է ունենում իմացական կառույցի վերաձևավորում: Այս փուլում ուսուցչի դերը նվազագույն է. նա հիմնականում ուղղորդողի, հուշողի, կարգավորողի դեր է կատարում:

Հնարավորություն է տրվում, որ աշակերտն ինքը հանրագումարի բերի իր գիտելիքները, յուրացնի նոր գիտելիքներ և դրանք դարձնի իր սեփականությունը, վերակառուցի իր ունեցած նախկին գիտելիքները նոր ձեռք բերած տեղեկատվության հիման վրա (11–46):

Դասի վերջում աշակերտները կատարում են «Կռունկ Հայաստանի» երգը, փորձում երգել երկձայն:

Տնային հանձնարարություն.

Հաճախե՛ք համերգասրահ, պատկերասրահ, ուշադիր լսեք երաժշտություն, դիտե՛ք նկարներ և աշխատե՛ք ընդհանրություններ գտնել երաժշտության և կերպարվեստի միջև: Ձեր տեսակետը, մեկնաբանությունները արվեստի այդ երկու տեսակների մասին քննարկե՛ք ձեր ծնողների և ընկերների հետ: Եզրակացությունները գրե՛ք ձեր տետրում:

Գնահատման չափանիշներ. հաշվի առնել աշակերտների պատասխանների ճշտությունը, թարմությունը, յուրօրինակությունը, նրանց ակտիվությունը, կենտրոնացումը, մտքի ճկունությունը, պատասխանների քանակը, պատասխանատվության զգացումը, երգի կատարումը, շար ժումների պլաստիկան, ռիթմի զգացողությունը, նոտաներով երգեցողությունը, հետաքրքրասիրությունը արվեստների նկատմամբ, ստեղծագործական աշխատանքների որակը, թարմությունը, արագությունը: Խորհուրդ է տրվում վատ գնահատական չդնել: Կարելի է սահմանափակվել բավարար, լավ և շատ լավ գնահատականներով: Պետք է հիշել, որ աշակերտի ջանքերի խրախուսումը, ուսուցչի հայտնած գոհունակությունը ոգևորիչ են և նպաստում են երաժշտական արվեստի նկատմամբ երեխաների հետաքրքրության ամրապնդմանը:

ԵՐԱԺՇՏԱՏԵՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

ԻՆՏԵՐՎԱԼՆԵՐ

Աշակերտների երաժշտական դաստիարակության ողջ ընթացքում կիրառվելու է ուսուցման մի կարևոր սկզբունք. ոչ մի երաժշտատեսական գիտելիք՝ առանց հնչող երաժշտության:

Ինտերվալների ուսուցումը 5-րդ դասարանում կապվում է երգերի ուսուցման հետ:


Աշակերտները երգում են հայկական ժողովրդական «Նարոյ» երգը և նկատում, որ մեղեդու հնչյուններն ունեն տարբեր տևողություն և բարձրություն:

Երգը նոտաներով երգելիս տեսանելի է դառնում մեղեդու հնչյունների շարժումը: Դրանց մի մասը շարժվում է հաջորդաբար, մի մասը՝ թռիչքներով: Կան հնչյուններ, որոնք կրկնվում են միևնույն բարձրությամբ: Այդ հնչյունները միմյանց նկատմամբ ունեն որոշակի տարածություն ու բարձրություն, որը կոչվում է ինտերվալ (տե՛ս դասագիրքը): 5-րդ դասարանում աշակերտները ծանոթանում են ինտերվալներին՝ կվինտայի սահմանում, մյուս ինտերվալներին ծանոթանում են 6-րդ դասարանում:

Ինտերվալներին պետք է անդրադառնալ ուսումնական տարվա ընթացքում այնքան անգամ, որքան դրա անհրաժեշտությունը լինի, մասնավորապես, երկձայն երգեցողության ժամանակ: Դա կօգնի ստացած գիտելիքներն ամրապնդելուն:

Ինտերվալները հարմար են «ցուցադրել-հնչեցնել» ձևերի նշաններով, երբ անհրաժեշտ է լինում երգել երկձայն վարժություններ կամ մատչելի երգեր (12-44):

Երգեցողության այս ձևն ավելի է ակտիվացնում աշակերտների հարմոնիկ լսողության զարգացումը: Ձախ ձեռքով ցույց է տրվում ինտերվալի հիմքը, իսկ աջ ձեռքով՝ զագաթը: Օրինակ.



Եթե ձեռքի նշաններով երգած վարժությունը նոտագրենք, կունենա այսպիսի տեսք.



Աշակերտները երկձայն տարբեր մեծության ինտերվալներ են երգում ուսուցչի ձեռքի նշաններով, ապա՝ նոտաներով: Դա զարգացնում է աշակերտների մեղեդային և հարմոնիկ լսողությունը:



Այսպես կարելի է երգել նաև եռաձայն: Այդ դեպքում դասարանը բաժանում ենք երեք խմբի: Բոլորը

միասին երգում են դո հնչյունը և երկարաձգում: Ուսուցիչը 2-րդ և 3-րդ խմբերին ձեռքի նշանով ցույց է տալիս ընդ հնչյունը և կանգ առնում մի հնչյունի վրա: 1-ին խումբը շարունակում է երգել դո հնչյունը: Այսպես միաժամանակ երգելով՝ լսում ենք տերցիա ինտերվալի հնչողությունը:



Դո-մի հնչյունները երգող 1-ին և 2-րդ խմբերը շարունակում են իրենց երգեցողությունը: Ուսուցիչը 3-րդ խմբին ցույց է տալիս ֆա, սո հնչյունները և կանգ առնում սո հնչյունի վրա:

Օրինակ՝

Երեք խմբերը միասին՝ միաժամանակ երգում են դո-մի-սո հնչյունները, ստեղծվում է եռաձայն երգեցողություն՝ երկու տերցիա և մեկ կվինտա ինտերվալով: Սա ոչ միայն զարգացնում է հարմոնիկ լսողությունը, այլև խորացնում է ինտերվալների մասին գիտելիքները: Աշակերտները գործնականում կարողանում են հնչեցնել պրիմա, սեկունդա, տերցիա, կվարտա, կվինտա ինտերվալները՝ մաժոր և մինոր հնչյունաշարերում:

Ուսուցիչը կարող է ստեղծել լսողությունը և երգչային ձայնը զարգացնող վարժություններ:

ԵՐԳՈՂ ՁԵՌՔԵՐ¹

«Երգող ձեռքերի» նշանները պայմանական, խորհրդանշական ձևեր են, որոնք պատկերում և արտահայտում են երաժշտության հնչյունաշարի (լադի) ձայնաստիճանների փոխհարաբերությունները: Դրանք նպաստում են խոսքի, մտքի, երաժշտական հնչյունների լսողական պատկերացումների ձևավորմանը և զարգացմանը, ներքին լսողության մեջ ստեղծում հնչյունների կամ հնչյունաշարերի տեսալսողական և զգայաշարժական «հնչող» կայուն մտապատկերներ (ամրահետքեր, ստերեոտիպեր):

Այդ մտապատկերները երեխայի ներքին լսողության մեջ կարող են արթնանալ և հնչել, եթե նորից ցուցադրվեն ձեռքի նշանները կամ անվանվեն միայն ձեռքի նշանների վանկային անունները (դո, ըն, մի...):

Այս երևույթը հոգեբանության մեջ բնութագրվում է որպես ռեֆլեկտորային գործողություն, որը հակազդման սկզբունքով առաջ է բերում ոչ միայն ձեռքերի շարժումներ, այլև ներքին լսողության մեջ «արթնացնում» և «հնչեցնում» է ձեռքի նշանների միջոցով նախկինում ամրակայված հնչյունաշարի ձայնաստիճանները:

Ուրեմն՝ ձեռքի նշաններով երեխաները կարողանում են լսել, հասկանալ և ներքին լսողությամբ պատկերացնել, ինչպես նաև բարձրաձայն երգել հնչյունաշարի ձայնաստիճանները կամ առանձին մեղեդիներ: Ձեռքի նշանները նպաստում են, մասնավորապես, երեխաների ներքին լսողության ձևավորմանն ու զարգացմանը, այսինքն՝ սովորած, բայց իրականում չհնչող մեղեդին «անձայն, մտքում երգելու» կարողության զարգացմանը: Բազմազան են ձեռքի նշաններով երգելու ձևերը: Ձեռքի նշանին նայելով կարելի է որոշել, թե երեխաներից ով է իրականում ճիշտ «լսում» հնչյունը, ճիշտ երգում մտքում, և ով է, որ միայն տեսողական հիշողությամբ կրկնում է «դատարկ» նշանները, ում մտքում մեղեդին չի «հնչում»:

Բոլոր երեխաների համար ձեռքերը պետք է դառնան «երգող»: «Երգող ձեռքերի» էությունն այն է, որ երեխաների ուշադրությունը հնչյունաշարի ձայնաստիճանների վրա կենտրոնացնելուց բացի, պայմանական ռեֆլեքսային կապ է ստեղծվում ներքին լսողության մեջ ամրակայված հնչյունաշարի ձայնաստիճանների և ձեռքի նշանների միջև:

«Երգող ձեռքերի» պայմանաշանները երաժշտական լսողության և մտածողության զարգացման ակտիվ միջոցներ են, որոնց շնորհիվ երեխաները առավել հեշտ են ընկալում և յուրացնում ոչ միայն հնչող երաժշտությունը, այլև երաժշտական գիտելիքներն ու գործողությունները: Մկանային կինեսթետիկ այն զգայությունները, որոնք առաջանում են ձեռքերի, մատների շարժման միջոցով, նպաստում են նաև երաժշտալսողական պատկերացումների և գաղափարների ձևավորմանը (մանիպուլացիա):

«Երգող ձեռքերի» նշանները տեսողական են դարձնում երգի մեղեդու հնչյունների շարժումը, փոխհարաբերությունները, շարժման ուղղությունը՝ վեր, վար կամ միևնույն բարձրության վրա, մեղեդու ուղիղ՝ հնչյունների տևողությունների փոխհարաբերությունները, մեղեդու բնույթը՝ ուրախ, թախծուտ,

¹ «Երգող ձեռքերի» նշանները ստեղծել են անգլիացի նշանավոր երաժիշտ-մանկավարժներ Ջոն Կյորվենը և Սառա Գլովերը (1860): Նշաններն այսօր էլ կիրառվում են մի շարք երկրներում՝ երեխաների երաժշտական դաստիարակության գործընթացում:

տեմպը՝ արագ, դանդաղ, դինամիկան՝ ուժեղ, մեղմ և այլն:

ԿԱՅՈՒՆ ԵՎ ԱՆԿԱՅՈՒՆ ՀՆՁՅՈՒՆՆԵՐ

Երաժշտական հնչյունները զուգորդական կապի մեջ են: Այդ հնչյունների մի մասը ավելի կայուն է, մի մասը՝ անկայուն:

Կայուն և անկայուն հնչյունների փոխհարաբերության համակարգը ընդունված է անվանել լադ (համաձայնություն, ձայնակարգ): Լադերը տարբեր են լինում: Ակադեմիական երաժշտության մեջ կիրառվում են հիմնականում մաժոր և մինոր անավնումները: Լադի հնչյունաշարի յուրաքանչյուր հնչյունը նրա որևէ ձայնաստիճանն է: Լադի հնչյունաշարում անկայուն ձայնաստիճանները ձգտում են դեպի կայունները: Լադի ամենակայուն ձայնաստիճանը տոնիկան է (1-ին ձայնաստիճանը), որին ձգտում են մյուս բոլոր կայուն և անկայուն ձայնաստիճանները:

Դո մաժոր լադի հնչյունաշարի կայուն ձայնաստիճաններն են. Առաջինը՝ դո-ն, երրորդը՝ մի-ն, հինգերորդը՝ սո-ն: Անկայուններն են՝ երկրորդը՝ ռե-ն, չորրորդը՝ ֆա-ն, վեցերորդը՝ լա-ն, յոթերորդը՝ սի-ն:




(Մլաքներով ցույց է տրված անկայուն ձայնաստիճանների ձգողությունը դեպի կայունները):

Հնչյունաշարի կայուն և անկայուն ձայնաստիճանների փոխհարաբերությունները ցույց են տրվում ձեռքի դաստակով և մատներով՝ արտահայտելով ձայնաստիճանների կայունությունը և անկայունությունը, ձգտման ուղղությունները:

Ձեռքի նշաններից յուրաքանչյուրն ունի իր պայմանական հատուկ ձևը և ցույց է տրվում դաստակի որոշակի դիրքով: Ձեռքի նշանը պետք է ցուցադրել կրծքի դիմաց, արմունկը կիսածալած վիճակում: Անհրաժեշտ է սկզբից ներկայացնել ձեռքի նշանի դիրքը. մի-ն՝ ծնոտի, ռե-ն՝ կրծքի, դո-ն՝ սեղանի բարձրության վրա (եթե երգում են նստած) և այլն: Օրինակ՝ Դո հնչյունաշարի 1-ին ձայնաստիճանը՝ դո-ն, որպես «ամենակայունը», «հանգիստը», որի վրա հենվում են հնչյունաշարի բոլոր ձայնաստիճանները, ցույց է տրվում ձեռքի այսպիսի դիրքով՝ դաստակը ուղիղ, մատները սեղմված բռունցքով:



2-րդը՝ ռե-ն, որպես հնչյունաշարի «անկայուն», «անհանգիստ» ձայնաստիճան, որը ձգտում է վերև և ներքև դեպի հնչյունաշարի 1-ին՝ դո և 3-րդ՝ մի «կայուն» ձայնաստիճանները, ցույց է տրվում ձեռքի բացված, հարթ ափով, մատները ուղղված դեպի վեր:




3-րդը՝ մի-ն, որպես հնչյունաշարի «կայուն», «հանգիստ» ձայնաստիճան, ցույց է տրվում դաստակի ուղիղ դիրքով, մատները իրար հպված, ափը բաց վիճակում դեպի ներքև:



4-րդը՝ ֆա-ն, որպես հնչյունաշարի «անկայուն», «ծանր» ձայնաստիճան, որը ձգտում է դեպի ներքև՝ 3-րդ՝ մի «կայուն» ձայնաստիճանը, ցույց է տրվում բռունցքով՝ ցուցամատը ուղղված դեպի ներքև:



5-րդը՝ սո-ն, որպես հնչյունաշարի «կայուն», «իշխող», «պայծառ» ձայնաստիճան, ցույց է տրվում դաստակը ուղիղ, մատները իրար միացված, ափը դեպի կողմ՝ լայն բացված:



6-րդը՝ լա-ն, որպես հնչյունաշարի «անկայուն», «թախծոտ» ձայնաստիճան, որը ձգտում է ներքև դեպի 5-րդ սո ձայնաստիճանը, ցույց է տրվում դաստակը թույլ կախված, մատները իրարից հեռացված:



7-րդը՝ սի-ն, որպես հնչյունաշարի «ամենաանկայուն», «լարված» ձայնաստիճան, որը ձգտում է դեպի վեր՝ հնչյունաշարի 8-րդ՝ դո «կայուն» ձայնաստիճանը, ցույց է տրվում ցուցամատը դեպի վեր ուղղված:



8-րդը՝ երկրորդ ութնյակի դո ձայնաստիճանը ցույց է տրվում այնպես, ինչպես առաջին ութնյակի դո-ն, միայն ձեռքը ավելի բարձր:



Երեխաների լսողության զարգացումը և ձեռքի նշաններով երգեցողությունը կատարվում են հայկական ժողովրդական երգերի ուսուցման հիման վրա: Օրինակ՝ ուսուցանվում են «Սագիկ» և «Շվի» հայկական ժողովրդական երգերը, որոնց մեղեդու հնչյունաշարը բաղկացած է դո-րե-մի ձայնաստիճաններից:


Երգը սովորելով՝ երեխաների ներքին լսողության մեջ ամրակայվում են դո-րե-մի ձայնաստիճանները: Այնուհետև ցուցադրվում են դո-րե-մի ձեռքի նշանները: Դրանով երգի մեղեդու դո-րե-մի ձայնաստիճանների հնչողության և ձեռքի համապատասխան նշանների միջև պայմանական ռեֆլեկտորային կապ է ստեղծվում: Երբ ցուցադրվում են դո-րե-մի ձեռքի նշանները, երեխայի ներքին լսողության մեջ «հնչում» են այդ ձայնաստիճանները, կամ, երբ անվանում են դո-րե-մի վանկային անունները, երեխան ցուցադրում է համապատասխան ձեռքի նշանները նայլն:

Այս ձևով երեխաների լսողության մեջ ամրակայվում են հնչյունաշարի ձայնաստիճանները:


Ավելի մանրամասն տե՛ս «Երաժշտությունը 1-4-րդ դասարաններում» ուսուցչի մեթոդական ձեռնարկը, «Զանգակ-97» հրատարակչություն, Երևան, 2008 և «Հրաշք մատիկներ» ուսումնամեթոդական ձեռնարկը, Երևան, «Անտարես», 2006:

Դո հնչյունաշարը երգե՛ք ձեռքի նշաններով:

Ձեռքի նշաններ՝ դո հնչյունաշար



Ձեռքի նշաններով երգե՛ք երկձայն:



ՀԱՎԵԼՎԱԾ

ԿԱՔԱՎԻ ԵՐԳԸ

Խոսք՝ Հ. Թումանյանի

Երաժշտ.՝ Կոմիտասի

Աշխույժ

Ա - րև բաց - վեց թուխ ամ - պե - րեն,
Կու - բալ թը - ոտլ կու - նաչ սու - րեն,
Կու - նաչ սու - րեն՝ սու - րի ծե - րեն,
Բու - րև քե - րալ ծա - դիկ - նե - րեն:
Սի - րու - նի՛կ, սի - րու - նի՛կ,
Սի - րու - նիկ, նախ - շո՛ն կու - բա - վիկ:

ԱԽ, ԻՆՉ ԼԱՎ ԵՆ...

Խոսք և երաժշտ.՝ Հովհ. Թումանյանի

Հանդարտ

Ա՛խ, ի՛նչ լավ են սա - րի վը - րա

Անց-նա՛մ օ - րերն ա-նո՛ւշ, ա - նո՛ւշ, Ա - նըր-ջա - յին,

թե-թե-վա - սա՛հ, Անպ ու հո - վերն ա-նո՛ւշ, ա - նո՛ւշ:

ԱՌՈՒՆ ՈՒ ԱՂԲՅՈՒՐԸ

Խոսք՝ անհայտ հեղինակի

Երաժշտ.՝ Ռ. Մելիքյանի

Չափավոր, աշխույժ

Հե՛յ, սաղ - բյու - թի գու - լա՛լ ջը - թեր,

ես էլ լի - նեմ՝ ձեզ հետը ըն - կեր:

Տե - սե՛ք՝ ձեզ հետը Ծաղ - կա - ձն - թում

Ինչ - պես եմ ես ու - թախս պա - թում:

ՕՐՈՐՈՅԱՅԻՆ

հատված «Կանտատ Հայրենիքի մասին»

երաժշտ.՝ Ա.Հարությունյանի

Դանդաղ, հանգիստ

p

Նրն - ջիր, նրն - ջիր, իմ լույս ման - կիկ,

օ - թոր եմ ա - սում.

First system of a musical score. The vocal line (treble clef) is in D major (two sharps). It begins with a quarter rest, followed by a quarter note, then a triplet of eighth notes, and ends with a quarter note. The lyrics are: դու նոր բաց - ված սա - րի ծա - ղիկ.

The piano accompaniment (grand staff) features a right hand with eighth-note chords and a left hand with a simple bass line of quarter notes.

Second system of the musical score. The vocal line continues with eighth-note chords, followed by a quarter note, and ends with a quarter rest. The lyrics are: հոգ - յակ սի - րա սուս.

The piano accompaniment continues with eighth-note chords in the right hand and a simple bass line in the left hand, concluding with a double bar line.

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Խոսք՝ Մ. Նալբանդյանի

Երաժշտ.՝ Տ. Չոխաջյանի

2.

1.

Չափավոր

Ա - զար տար - վաճն այն օ - ռից,
 Երբ հա - ճե-ցալ շունչ փր - չեկ, Իմ հո - դա-նյութ
 շին - ված - քին Կեն - դա - նու-թյուն սար - գե - վեկ,
 Ես՝ ան-բար-բառ մի մա - նուկ, Եր - կու ձեռ - քըս սար - գե - ցի
 Եվ իմ ան-գոր թե - վե-րով Ա - զա-տու-թյունն զըր - կե-ցի:

ԱՄՊԻ ՏԱԿԻՑ

Չափավոր
p

Ամ - պի պա - կից ջուր է գա³ - լի,
Դռ է պա³ - լի, փրր - փր - թում էն ո՞ւմ յարն է
նրա - րած լա - լի Հոն-գոր-հոն-գոր էն սա - թում:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ ԵԿԱՎ

Արագ

Համ - բար - ձումն ե - կալ, ծաղ - կուն քնն ալ - վան
 Փունջ - փունջ աղ - ջիկ - ներ սա - ռե - ին ե - լան

Ջու - գեղ են հան - դեր նախ - շուն գոր - գե - լով
 Վի - ճակ հա - նե - լու աշ - խոյժ եղ - գե - լով:

Համ - բար - ձում յայ - լա, յայ - լա՛ ջան, յայ - լա՛,
 Լալ օ - ռեր յայ - լա, յայ - լա՛ ջան, յայ - լա՛:

ԳԱՐՆԱՆ ԿԱՐՈՏ

Խոսք՝ Օվերբեկի
Թարգմ.՝ Մ. Միրզախանի
Երաժշտ.՝ Մոցարտի

Ուրախ
Ա - ռի', մա-յիւ, ա - ռի', թող պու -
Ա - ռի', ա - ռի', թող պու -

րա - կը կա - նա - չի, Առ - վի խո-խո - ջի
րա - կը կա - նա - չի, առ - վա - կի

զրակ մա-նու - շա - կը թող - թո - ջի, Ես
զրակ մա-նու - շա - կը թող - թո - ջի.

ի՛նչ սի-րով կու - գե - ի կա - պույր մա-նու - շակ քա -
կա- պույր մա-նու - շակ քա-
ղել Եւ ինչ - սի-սի՛ զմայ - լան - թով մար -
ղել, մար-
գե - ռի մեջ զքոս - նել:
գե- ռի մեջ զքոս- նել:

ՇՈՒՇԻԿԻ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ
(Թառի և դափի ոճով)

Երաժշտ.՝ Կոմիտասի

Աշխույժ և նազուկ

The musical score is written for piano and violin. It consists of five systems of staves. The piano part is in the left hand, and the violin part is in the right hand. The key signature is one sharp (F#), and the time signature is 6/8. The score begins with a piano (p) dynamic marking. The melody is characterized by rapid sixteenth-note passages and grace notes, typical of the 'Shushiki' style. The piano part provides a harmonic and rhythmic foundation with sustained chords and moving lines. The violin part features intricate melodic lines with many grace notes and slurs, creating a sense of movement and grace. The overall mood is lively and elegant, as indicated by the tempo/style marking 'Աշխույժ և նազուկ'.

This page of musical notation consists of six systems, each with a grand staff (treble and bass clefs) and a key signature of two sharps (F# and C#). The notation includes various musical elements such as notes, rests, and ornaments. The first system shows a melodic line in the treble clef and a bass line in the bass clef. The second system continues the melodic line with more complex ornamentation. The third system features a more active bass line with frequent sixteenth-note patterns. The fourth system shows a melodic line in the treble clef and a bass line with a long, sustained note. The fifth system features a melodic line in the treble clef and a bass line with a long, sustained note. The sixth system concludes the piece with a final melodic line in the treble clef and a bass line with a long, sustained note.

ԵՐԱՆԳԻ ԵՐԵՎԱՆԱ

Երաժշտ.՝ Կոմիտասի

Նազանի ♩ = 66

Մինչև վերջ նազունկ
p

This page contains five systems of musical notation for piano. Each system consists of a grand staff with a treble clef on the upper staff and a bass clef on the lower staff. The key signature is one flat (B-flat), and the time signature is 4/4. The notation includes various musical elements such as eighth notes, quarter notes, and half notes, often grouped with slurs. There are also rests and dynamic markings, with the letter 'f' (forte) appearing in the first, third, and fifth systems. The first system has a 'f' marking above the final measure. The third system has a 'f' marking above the final measure. The fifth system has a 'f' marking above the final measure. The notation is arranged in a clear, professional layout, typical of a printed musical score.

This image displays a page of musical notation, likely for a piano piece, consisting of five systems of staves. Each system contains a treble staff and a bass staff, connected by a brace on the left. The music is written in a key signature of two sharps (F# and C#) and a 3/4 time signature. The notation includes various musical elements such as eighth notes, quarter notes, and half notes, often grouped by beams. Phrasing is indicated by curved lines (slurs) over groups of notes. There are also rests and dynamic markings like 'f' (forte) and 'p' (piano). The page is numbered '50' at the bottom center.

ՔՈՉԱՐԻ

Հայկական ժողովրդական պար
մշակումը Ե.Նոսրաթյանի

The musical score is written for piano in 2/4 time. It consists of four systems of music. The first system begins with a piano (*p*) dynamic. The second system includes a repeat sign and a section marked 'և ալլո' (Laila). The third and fourth systems feature both piano (*p*) and forte (*f*) dynamics. The score includes various musical notations such as eighth and sixteenth notes, rests, and dynamic markings.

ՆԱՐՈՅ

Հայկական ժողովրդական

Չափավոր

Սա - րեն ի վար ջուր կու - գա,
 Նա - րո՛յ, Նա - րո՛յ, Նա - րո՛յ ջան, Քա - նի խը - մեմ՝
 դուր կու - գա, Ես մա - րալ եմ, դու՝ ջեյ - րան:

ՍԱՐԵՆ ԿՈՒԳԱ Հայկական ժողովրդական

Չափավոր

3

Սա-րեն՝ կու-գան՝ պաղ - պաղ ջը - բեր,

6

Բաղ՝ ու բաղ-չի՝ ա՛լ՝ ծա-ղիկ, Կը-կաթ - կը-թի

մար - մար քա-րեն, Բաղ՝ ու բաղ-չի՝ ա՛լ՝ ծա-ղիկ:

ПУСТЬ НАСТРОЯТ СКРИПКИ

Скоро, весело *Чешская плясовая*

mf

Пусть на - стро - ят скрип - ки скри - па - чи,

Пусть под - ни - мут тру - бы тру - ба - чи.

Нын - че бу - дет празд - ник здесь у нас.

f Стар и мал пой - дут *mf* се - год - ня в пляс.

f Тра - ля - ля - ля - ля. Тра - ля - ля - ля - ля.

Стар и мал пой - дут *mf* се - год - ня в пляс.

ԱՂԶԻԿՆԵՐԻ ՊԱՐԵՐԳԸ

Հայկական ժողովրդական

Չափավոր

Աղ-ջիկ նս-գե - րով, նս-գե-րով, Սի-րուն մս-գե -
 րով, մս-գե-րով, Աղ-ջի'կ, մի' գար մեր կս-լե-րով,
 Ինձ գե-րե-ցիր հս - գար նս-գե - րով:
 Աղ-ջիկ նս - գե - րով, նս-գե-րով, Տս-րան սս - գե -
 րով, սս-գե-րով, Ծս - մեր հյու-սած ոս - կի թե-լե - րով:

ԽՈՍՔ ԻՄ ՈՐԴՈՒՆ

Խոսք՝ Ս. Կապուտիկյանի

Երաժշտ.՝ Ռ. Պետրոսյանի

Քաղերգային

Լը-սի'ր, որ - դի'ս, սլար-գաւ՛ որ -

սեւ Սի-րող քո մոր խոս-քը սրը - ցանց, Այս - օր - վա -

նից հանձ-նում եմ քեզ Հա-յոց լե - գոն՛ հա-գա-րա -

գանձ: Կըր-րեղ է նա, հանց սար-դա - լոյս, Եր-կինք-նե -

րը ժա-մա - նա - կի, Շա - քա - չեղ է խը - ոռ - վա -

հոյզ Սը-լաց - քի հեղի հայկ-յան նե - տի:

ԿՈՌՆԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Չափավոր
♩

Դու քա - ռո՛վ ե - կար, իմ կը - ռո՛նկ,
Ի՞նչ լուր քե - ռի՞ր հայ - րե - նի - քեւ,
Խո - սի՛ր ինձ հեղ ւ - զա - րո -
րեն, Կյան - քըս կը - նը - վի - ռեմ եւ քեզ:
Վերջավորություն
Ե - դե - մա - կան դը-րախ-տա - վայր, Դա կոչ -
վում է մայր Հա - յա - տան:

ՊԵՊՈՅԻ ԵՐԳԸ

Խոսք՝ Ե. Չափափոր

Երաժշտ.՝ Ա. Խաչատրյանի

Չափափոր

Դամբը ձեռքիս ջուրն եմ մըլը - նում,
 Ձեռքս, n - արև թաց է լի - նում,
 Հա - լալ ար - յուն - քըր - տինք թա - տին,
 Քիրս ու դե - դիս լաց ին լի - նում:

ՀԶՈՐ ԲԱՆԱԿ

Խոսք՝ Հ. Շիրազի

Երաժշտ.՝ Աշ. Սաթյանի

Քայլերգային

Հա-յաւ - րաւ-նի սա - րե - թի պէս Թի-կունք
 ու - նեւ, հը - զո՛ր քա - նակ, Ոչ մի
 ու - սիս չի հաղ - թի քեզ, Մեր հաղ -
 թաւ - կան հը - զո՛ր քա - նակ: Դու՛ մեր
 փըր - կիչ, մեր ա - պաւ - վեն, Խաւ - վա -
 թի դեմ փառ ա - րե - զակ, Չար թըշ -
 նաւ - միք որ - քան դաւ - վեն, Դու՛ աւն -
 խոր - րակ, հը - զո՛ր քա - նակ:

ՄԵՆՔ ՔԱՋ ՏՈՀՄԻ ԶԱՎԱԿՆԵՐՆ ԵՆՔ

խոսք՝ Թ.Նալյանի

երաժշտ.՝ Տ.Զուխաջյանի

Andante con moto

f

5 *f*

Մենք քաջ տոհմի զավակներն ենք
մա - նըր - մու - մըր փոր - ձանք - նե - թից

9

չենք վա - խի,
չենք փախ - չի.

մենք դեռ փոր - լուց

12



շատ սի-րել ենք քա - ջու-թյուն,
ինչ էլ որ լի-նի՝

16



չենք հան-դուր-ժի պար-տու-թյուն:
Ու - թեմն ա -ռաջ,
տանք թըշ - նա-մուն

20



զար - կենք թըմ-բուկ հաղ - թա-կան,
մենք ծեծ ու ջարդ պատ - վա-կան.
թող ի - մա-նան՝

24

մենք չենք դառ-նա խա - դա-լիք, այն - պես պիտ ծե - ծենք,

28

որ հի-շեն հոր հար - սա-նիք:

33

38

ՎԱՐԴ

խոսք՝ Գյոթեի
թարգման. Ա.Բաբայանի

երաժշտ.՝ Ռ.Մելիքյանի

Moderato assai

p

6

Փոք-րիկ տը - դան մի վարդ տե - սավ,

11

ten.

տե-սավ մի վարդ դաշ-տի մի - ջին, վար - դը տե -

16

սալ ու - րա - խա - ցալ, մո - տիկ վա - զեց

21

սի - րուն վար - դին, սի - րուն վար - դին, կար - միր վար -

sub. *pp* *p*

24

- դին, կար - միր վար - դը դա2 - տի մի -

26

ջին: Սի-րուն վար - դին, կար-միր վար -

28

- դին, կար-միր վար - դը դաշ - տի մի -

30

1, 2. 3.

ջին: - ջին:

34

The musical score consists of two staves. The upper staff is in treble clef with a key signature of three sharps (F#, C#, G#). It begins with a half note G#4, followed by a quarter note A4, and a quarter note B4. A fermata is placed over the B4. The staff then continues with a series of eighth notes: G#4, F#4, E4, D4, C#4, B3, A3, and G#3. The lower staff is in bass clef with the same key signature. It begins with a half note G#2, followed by a quarter note A2, and a quarter note B2. A fermata is placed over the B2. The staff then continues with a series of eighth notes: G#2, F#2, E2, D2, C#2, B1, A1, and G#1. The piece concludes with a double bar line. The dynamic marking *pp* is written below the upper staff in the final measure.

ՄԱՐՏԻԿԻ ԵՐԳԸ

Խոսք՝ Գեղամ Սարյանի

Երաժշտ.՝ Աշոտ Սաթյանի

Չափավոր

Թըռ - չե - ի մըր - քով պուն, Որ իմ մայրն
է աւ - թուն, Տես - նե - ի այն ա - ռուն,
Կա - ռո - ւով ես ա՛ն - հուն, Որ ա - մեն մի գա-րուն Ջը-րե - րով
վա-րա - րուն Կար-կա - չում էր սա - րե - րում:
Տես-նե - ի այն ա - ռուն, Կա - ռո - ւով ես ա՛ն - հուն,
Որ ա - մեն մի գա-րուն Ջը-րե - րով վա-րա - րուն
Կար-կա - չում էր սա - րե - րում:

ՄԱՐՏԻԿԻ ԵՐԳԸ

Խոսք՝ Գ.Սարյանի

Էրաժշտ.՝ Ա.Սաթյանի

Andantino

solo

Թըռ - չե - ի մըտ - քով տուն,

ուր իմ մայրն է ար - թուն, տես - նե - ի

այն ա - ռուն կա - րո - տով ես ան-հուն, որ ա - մեն մի գա-րուն

ջը - րե - րով վա - րա - րուն կար - կա - չում էր սա - րե -

րում: duo Տես - նե - ի այն ա - ռուն

կա - րո - տով ես ան - հուն, որ ա - մեն մի գա-րուն ջը - րե - րով

վա - րա - րուն կար - կա - չում էր սա - րե - րում:

Coda
ոնգային

ritardando

2. Թեքվեի աղբյուրին,
 Կարոտած պաղ ջրին.
 Լինեի հանդերում,
 Մեր կանաչ մարգերում,
 Ուր ծաղկունքն են բուրում,
 Ուր մանուկ օրերում
 Հովն էր ինձ միշտ համբուրում:

3. Հայրենիքն իմ սրտում՝
 Թե չընկնեմ ես մարտում
 Ա՛խ, իմ մայր թանկագին,
 Տուն կգամ ես կրկին,
 Կսփոփեմ քո հոգին
 Համբույրով սրտագին,
 Կսեղմեմ քեզ իմ կրծքին:

ՊՍԱԿ, ՊՍԱԿ

Խոսք՝ Հ. Աղաբաբի

Երաժշտ.՝ Ռ. Մելիքյանի

Չափավոր

Պը-սակ, պը-սակ, փիկ-նի պը-սակ, Փե-սան ե-կալ՝

լի-քը քը-սակ: Պը-սակ, պը-սակ, փիկ-նի պը սակ, Փե-սան ե-կալ՝

լի - քը քը-սակ: Տիր - նա-նի-նե՛, փիր - նա-նի-նե՛,

Զոռ-նի ձե-նը գե - դով մին է: Տիր - նա-նի-նե՛,

փիր - նա-նի-նե՛, Զոռ-նի ձե-նը գե - դով մին է:

ՊՍԱԿ-ՊՍԱԿ

խոսք՝ Հ.Աղաբաբի

երաժշտ.՝ Ռ.Մելիքյանի

Moderato ♩ = 72

Պը-սակ, պը-սակ, տիկ - նի պը-սակ,
 փե-սան է - կավ լի - քը քը-սակ: Պը-սակ, պը-սակ,
 տիկ - նի պը-սակ, փե-սան է - կավ լի - քը քը-սակ:

Տիր - նա - նի - նե, տիր - նա - նի - նե,
mp

Զուռ-նի ձե - նը գե - դով մին է:
mp

Տիր - նա - նի - նե, տիր - նա - նի - նե,
mp

Ջուռ-նի ձե - նը զե - դով միև է:

attacca

(fine)

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Երաժշտություն» առարկայի հանրակրթական դպրոցի չափորոշիչ, ծրագիր, Երևան, 2007:
2. «Երկխոսություն դաստիարակության մասին», գիրք ծնողների համար, Երևան, «Լույս», 1990:
3. «Հրաշք մատիկներ», ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, «Անտարես», 2006:
4. «Նոր մոտեցումներ ուսուցիչների պատրաստման գործընթացին, գործիմաց մոտեցում, տեսություն և պրակտիկա», ձեռնարկ ուսուցիչների պատրաստման համար, «ԱՅԲԵՔՍ», Երևան, 2004:
5. Արծրունի Գ., Գրականություն, արվեստ, գեղագիտություն, հոգիվածների ժողովա ծու, կազմող և խմբագիր՝ Յակով Խաչիկյան, Երևան, 2009:
6. Գևորգյան Կ. Բ., Սկսնակ պարախմբերում հայկական պարային շարժումների ուսուցման մեթոդները, Երևան, 2005:
7. Երզնկյան Մ. Գ., Կերպարվեստի բառագիրք, Երևան, 1996:
8. Լուկին Յու. Ի., Սկստերշիկով Վ. Կ., Էսթետիկայի հիմունքներ, Երևան, «Լույս», 1984:
9. Խաչիկյան Հ., Ձայնակազմավորման հիմունքները երգարվեստում, Երևան, 2005:
10. Կոմիտաս, Հոգիվածներ և ուսումնասիրություններ, Երևան, 1941:
11. Հակոբյան Ա. Հ., Գույնի և երևակայության գործոնները նկարչության ուսուցման գործընթացում, Երևան, 2006:
12. Համագործակցային ուսուցում, ձեռնարկ, Երևան, «Անտարես», 2006:
13. Հովարդ Գարդներ, Բազմաբնույթ մտածողության տեսության կիրառումը ուսուցման վաղ շրջանում, ձեռնարկ տարրական դպրոցի ուսուցչի համար, Երևան, 2001:
14. Ղազարյան Կ., Թադևոսյան Գ., Երաժշտության ուսուցչի ձեռնարկ, 2–7–րդ դասարաններ, «Զանգակ» հրատարակչություն, 2013:
15. Յուզբաշյան Յու. Վ., Ավետիսյան Վ. Ի., Երաժշտաօրինական շարժումը և պարը կրտսեր դպրոցում: Ուսումնաօժանդակ ձեռնարկ, Երևան, 2018:
16. Յուզբաշյան Յու. Վ., Վեյս Պ. Ֆ., Կրտսեր դպրոցականների երաժշտական մտածողության զարգացումը, Մեթոդական ձեռնարկ 33 պլակատներով, Երևան, «Լույս», 1982:
17. Յուզբաշյան Յու. Վ., Փահլևանյան Ա. Ա., Ավետիսյան Վ. Ի., Երաժշտությունը 1–4–րդ դասարաններում, ուսուցչի մեթոդական ձեռնարկ, «Զանգակ–97», Երևան, 2008:
18. Յուզբաշյան Յու. Վ., Փահլևանյան Ա. Ա., Ավետիսյան Վ. Ի., Երաժշտությունը 1–4–րդ դասարաններում: Ուսուցչի մեթոդական ձեռնարկ, «Զանգակ» հրատարակչություն, 2012:
19. Յուզբաշյան Յու. Վ., Փահլևանյան Ա. Ա., Երաժշտությունը 1–4–րդ դասարաններում, ուսուցչի մեթոդական ձեռնարկ, «Մակմիլան–Արմենիա», Երևան, 2001:
20. Նալչաջյան Ա. Ա., Մկրտչյան Ս. Շ., Հոգեբանություն, դասագիրք 9–րդ դասարանի համար, Երևան, «Զանգակ–97», 2000:
21. Նալչաջյան Ա., Հոգեբանության հիմունքներ, «Հոգեբան» հրատ., Երևան, 1997:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՈՒՆԿՆԴՐՈՒՄԸ

ԱՐՎԵՍՏԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՐԱՐՎԵՍՏԸ

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԸ

ԿԱՐՈՂ ԵՆՔ ԼՍԵԼ ԳԵՂԱՆԿԱՐԸ

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԹԱՏՐՈՆՈՒՄ ԵՎ ԿԻՆՈՅՈՒՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՐՆ ՈՒ ՊԱՐԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

«ԿԱՔԱՎԻ ԵՐԳԸ»

«ՔԱՄԱՆՉԱ»

«ԱՄՊԻ ՏԱԿԻՅ»

«ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՅԱՅԼԱ»

«ՊՍԱԿ–ՊՍԱԿ»

«ՆԱՐՈՅ»

«ՍԱՐԵՆ ԿՈՒԳԱ»

«ԹՈՂ ԼԱՐԵՆ ԶՈՒԹԱԿՆԵՐԸ»

«ԱՂՋԻԿՆԵՐԻ ՊԱՐԵՐԳԸ»

«ՁԵՎԱՎՈՐ ՎԱԼՍ»

«ՉԱ–ՉԱ–ՉԱ»

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ, ՆՈՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

ԴԱՍԻ ՊԼԱՆ

ԴԱՍԻ ՊԼԱՆ

ԵՐԱԺՇՏԱՏԵՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

ԻՆՏԵՐՎԱԼՆԵՐ

ԵՐԳՈՂ ՁԵՌՔԵՐ

ԿԱՅՈՒՆ ԵՎ ԱՆԿԱՅՈՒՆ ՀՆՉՅՈՒՆՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ

Յ. Վ. ՅՈՒՋԲԱՇՅԱՆ, Ա. Ա. ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ, Վ. Ի. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

5-ԴԴ ԴԱՍԱՐԱՆ

Մեթոդական ուղեցույց

Հրատարակչության տնօրեն՝ Էմին Մկրտչյան
Տեխնիկական խմբագիր՝ Նվարդ Փարսադանյան
Խմբագիր և սրբագրիչ՝ Նունիկ Ավետիսյան
Էջադրումը՝ Սուսաննա Ավետիսյանի
Կազմի ձևավորումը՝ Մարիամ Կանայանի
Նոտագրող՝ Հասմիկ Ղուկասյան

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84/8
Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 10 տպ. մամուլ

«Զանգակ» հրատարակչություն
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2
Հեռ.՝ (+37410) 23 25 28, էլ. փոստ՝ info@zangak.am
Էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak